


Ա. Ահարոնյան
Տիգրանելիք պահպան
1910թ.

800
97-ԱԴ

891. 99

Ա-42




891.99
U-42

21 JUN 2005

19 NOV 2010
19 NOV 2010

Ա. ԱՅՐՈՒԵԱՆ



693/Վ.

ՄՈՒԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

100
100
100



345

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԷԼԵԿՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՍԵԱՆԻ, ՊՈԼԻ. 7.
1910

3.02.2013

18.475

ՏԸՆԿԱՆ 45

568


Այս առաւօտ տիկին Սօփիան շատ ուշ
դարթեց.

Ննջարանի թանձր վարագոյրների բաց-
ւածքից թափանցող աշնանային արևի ցըն-
ցուղները քնքօրէն շառագունել էին սե-
նեակի կիսախաւարն ու պատերը և գունա-
ւոր կիսաստւերով դողդողում էին կահ-կա-
րասիների վրայ:

Երիտասարդ կինը՝ խորունկ մտածմուն-
քի մէջ, անշարժ պարկած էր շքեղ, փա-
փուկ անկողնում իր մտախոհ ու վշտոտ հա-
յեացքը ծաղկանկար առաստաղին յառած:
Նրա սև ու փարթամ մազերը ալիքաւոր ու
քմահաճ ծալքերով փուել էին բարձերի ըս-
պիտակութեան վրայ՝ ինչպէս մութ ու գա-
լարուն ամպը լերան ձիւնապատ կատարին:

Նա ներվոտ շարժումով մի փոքր յետ
ձգեց վերմակը—սենեակի օղը տաք էր:

Մետաքսէ վարդագոյն շապիկը բաց
թողնելով նրա երկար մարմարէ պարանո-
ցն ու ձիւնաթոյր լանջը, ակնապարար վա-
յելչութեամբ ծածկում էր կուրծքը, որ մեղ-
միւ վերուվար էր լինում ինչպէս վաղոր-



166+

դեան թափանցիկ մշուշի տակ խայտացող
ալիք։ Խոշոր, երազուն աչքերի տակ մուգ
կապոյտ գծերը — անքուն, տազնապալից գի-
շերւայ լուռ վկաներ — էլ աւելի հրապուրիչ
ու խորունկ էին դարձնում գեղանի կնոջ
հայեացքը, որի մէջ լողում էր վիշտը, որ-
պէս նօսը ամպը երկնքի անհուն կապոյտի
վրայ։

Անհոգ ու անգիտակից նազանքով նա
բարձրացրեց վլուխը և շքեղ մազերը քաշ
ընկան՝ բարձունքից դահավէժ ալիքներով։
Նա թափով ի մի հաւաքեց նըանց ճոխ փըն-
ջերը, ուսի վրայով ձգեց կրծքին, ապա հո-
լանի կռները բոլորած պատկաճե՝ ձեռները
զլսի տակ դրեց, ասես ինքն իրան շշնջալով՝
«այսպէս աւելի լաւ է...»

Եւ կրկին աչքերը յառեց առաստաղին
անթարթ ու մտախոհ։

Ննջարանի լուռ խաղաղութեան ու վար-
դագոյն մշուշի մէջ նա գեղեցիկ էր ինչպէս
մի դիւթիչ երազ։

Տարտամ վիշտը նրա դէմքին աւելի և
աւելի խորունկ էր դառնում որպէս երե-
կոյեան նիրհող լճի վրայ թանձրացող մէզը։
Պատկերներ ու յուշեր մերթ ցաւոտ, մերթ
ժպտուն, և միշտ հրապուրիչ պաշարել էին
վլուխը, աշնան հողմերի բերան ընկած տե-

րեների պէս խելայեղօրէն տարւում էին, գա-
լարւում, բարձրանում, իջնում, ցըիւ գա-
լիս, կրկին կուտակւում և այսպէս անվերջ...

Սեփական կեանքն էր փուել իր աչքի
առաջ։

Սօֆիան դիտում էր իր անցած օրերը,
ինչպէս մի հին նւիրական գիրք, որի փոշոտ
ու գունատ թերթերի արանքներում շարւած
են ծաղկի թերթիկներ, վաղուց հետէ չո-
րացած, դալուկ, բուրմունքից զրկւած, և
որոնք սակայն պահում են հին յուշերի պատ-
կերները։ Թախծոտ համբերութեամբ թեր-
թում էր Սօֆիան իր կեանքի գիրքը, մէկիկ-
մէկիկ նայում էր իր յուշերի չորացած ծա-
ղիկներին և նրա հոգին լուսթեան մէջ մերթ
ժպտում էր, մերթ լալիս։

Եւ ինչ շատ էին այդյուշերը. և նրան-
ցից իւրաքանչիւրը յարուցանում էր հազար
ու մի խոհեր, յոյզեր, պատկերներ, ու ամեն-
քը միասին թիթեռնիկների խօլ ու խայտա-
բղէտ երամով՝ դարձիկ ու քմահաճ
լողում էին նրա վշտի գունատ մշուշի մէջ։

Կախարդական մի ձեռք այսօր հզօր շար-
ժումով յանկարծ դադար էր տւել նրա գո-
յութեան ընթացքին և երիտասարդ կինը
կանգ առած կեանքի մեծ ճանապարհին, բաց
աչքով տեսնում էր ինքն իրան, տեսնում էր

իր անցեալը և անողոք դատաւորի պէս քըր-
քըում էր սեփական հոգին վճիռ արձակելու
համար:

Պատկերը վհատեցուցիչ էր և դատա-
վճիռն անողորմ—նա ինքն իրան խարել էր՝
կապելով կեանքը մի մարդու հետ, որ միշտ
թափուր պիտի թողնէր խորոնկ ու բուռն
յոյզերի տենչացող իր հոգին: Մեղմացուցիչ
հանգամանք չըկար. իր սեռին յատուկ պերճ
երևակայութեամբ նա պատրանքներից հիւ-
սել էր երջանկութեան ցնորական մի աշ-
խարհ, որ այժմ ինքնաքննին հոգի սառը շըն-
չից ցըիւ էր գալիս շամանդաղի պէս:

Նա խորը հառաչեց.

Եւ զիշերւայ պէս սև ու ծանր թախիծը
իջաւ, սղմում էր նրա կուրծքը, կոկորդը.
Նա խեղդում էր օդի պակասութիւնից:

Տենդուտ շարժումով իսպառ դէն շպըր-
տեց վերմակը, ցած թռաւ անկողնից, կանգ-
նեց փափուկ գորգի վրայ և յանկարծ ինքն
իրան տեսնելով պահարանի դրան ահագին
հայելու մէջ՝ մնաց քարացած: Ասես իր ամուս-
նութեան ութ տարիների ընթացքում առա-
ջին անգամ էր տեսնում հայելու մէջ իր ամ-
բողջ գեղանի մերկութիւնը, իր քնքոյշ կա-
նացիութիւնը: Ամուսնական կեանքն անցել
էր այդ հրապուրիչ կերտածքի վրայով խը-

նայելով նրա կուսական թարմութիւնը, ինչ-
պէս որ կոյս էր մնացել նրա հոգին:
Եւ նայում էր անյագ ու երազուն...

Մազերը հարուստ փնջերով վար թափ-
ւեցին ինչպէս փլչող գիշեր և թիկունքի վը-
րայից յորձանք տւին մինչև մէջքը, Քաշ
ընկած շապկի տակից բարձրացող կոլոր ուսուր,
հոլանի կոներն իրենց գիրգ վայելչութեամբ,
թրթռուն լանջը, և անհանգիստ շնչառու-
թեամբ խայտացող կուրծքը կազմում էին
միներդաշնակ, ակնապարար ամբողջութիւն,
որ հանճարեղ արուեստագէտի ձեռքը կար-
ծես նոր էր դուրս քաշել մարմարի զանգ-
ւածից: Մերկ սրունքներին ու փոքրիկ ոտ-
ներին նայեց, որոնք զոյգ տատրակների պէս
իրար կողքի սղմւած, ասես նայում էին հա-
յելուն ու ժպտում: Մի տեսակ մանկական
հաճոյք էր զգում դիտել սեփական մարմնի
գեղը, և քանի շատ հրապոյըներ էր երևան
հանում այնքան աւելի էր տիրում, դէմքի
թախիծն աւելի էր թանձրանում: Մետաքսէ
շապկի խորհրդաւոր նըրութեան տակ թըր-
թռացող այդ գիւթիչ գեղեցկութիւնը, որ
սիրող տղամարդի համար հզօր ու խենթ ներ-
շնչումների անհատնում աղբիւր պիտի լի-
նէր, ութ տարի շարունակ մնացել էր ինչ-
պէս հողի տակ թագցըրած գանձ:

Եւ առաջին անգամ այնքան անխորհուրդ տարիներից յետոյ, նա հասկացաւ, թէ ինչու մի տեսակ կուսական երկչութեամբ միշտ սքողւած է պահել իր մերկութիւնը ամուսնու առաջ, հասկացաւ, թէ ուր է թագնւած իր այդ յամառ, յարատե ամօթխածութեան աղբիւրը։ Միայն անհունօրէն սիրւած ու յաւէտ ցանկալի տղամարդի համար է կինը միշտ շուայլ իր հրապոյըներով, անսպառ՝ իր սիրոյ գողարիկ, բազմազան արտայայտութիւններով։ հակառակ դէպքում նա անգիտակցօրէն ժլատ է սիրոյ մէջ և իր սպանութիւնը բացադրում է ամօթխածութեան զգացմունքով։

Խղճուկ պատրանք, որ ժպտում է սիրոյ գերեզմանի վրայ ու տանելի գարձնում տաղտուկ զոյգերի անմիտ կենակցութիւնը։

Նա խորը հառաչեց ու յետ փախաւ հայելուց։

Յոգնած, յուսաբեկ շարժումներով, նա հագնուում էր։

* *

Նա չը նախաճաշեց. անցաւ ընդունաբան, ուր աւելի լոյս ու օդ կար, ուր հեշտ էր չնչել, խորհել։ Թախիծը որ երեկւանից յանկարծ ներս էր խուժել բնակարանը,

մեղմիւ սողաց նրա յետեկից ինչպէս ու գալարուն օձ։ Սօֆիան ամեն կողմ զգում էր նրա սառը շունչը, նրա հազիւ լսելի փափառւկը իր զգեստի շրջիւնի, իր տարտամ ոտնաձայների, իր շնչառութեան, անգամ օդի նուրբ, աննկատելի երերումների մէջ։ Ամեն տեղից նա էր նայում, այդ խեղդող, ու թախիծը, և' վարագոյըների ծալքերի միջից, և' կահ-կարասիների տակից, անգամ պատերից թարթող նկարների հայեցքներով։

Աշնանային առաւօտեան դուրեկան արեց թափանցել էր լուսամուտից և նրա շողերի հետ գողդողում էին յատակի վրայ փողոցի ծառերի ստւերները նկարագեղ ձեւերով։

Նոյն շողերի մէջ լողալով, յատակի վը-րայ խաղում էր երեք չորս տարեկան մի մանուկ հիւանդոտ, գունատ ու նւազ։ Նրա սրւած քիթը խիստ լայնացած քթածակերով, խոշոր, պաղ ու խոր ընկած աչքերը, որ կարծես ձանձրանում էր թարթել, մանկան դալուկ դէմքին տալիս էին խղճալի արտայայտութիւն։ Երբ արևի շողերն ընկնում էին ուղիղ երեսին, նրա անարիւն թափանցիկ մորթին թեթե գոյն էր ստանում և երակները երկում էին, ինչպէս ձերմակ շղարշի

վրայ բանւած կապտաւուն թելեր: Երբ շարժ-
ւում էր, կամ փորձում վերկենալ, թւում
էր, թէ նրա բարակ ոտները կը ճկւին, եր-
կուտակ կը ծալւին անգամ իր, խղճուկ մար-
մի չնչին ծանրութեան տակ:

Այդ քնքոյշ, եթերային արարածը կար-
ծես ապրելու համար չէր եկել աշխարհ,
այլ հէնց այնպէս, որ նայի ու անցնի, ինչ-
պէս ուշ աշնանը լեռնալանջին ծլած մի մե-
նաւոր ու գունատ ծաղիկ, որ առաջին հող-
մի հանդէպ թօշնում, գլուխը քաշէ ձգում
փոշիների մէջ: Նա շատ էր դալուկ, շատ
էր փխրուն կեանքի համար:

Եւ սակայն մանկութիւնը խօսում էր
այդ վախտ, վատոյժ կազմուածքի մէջ. Հը
նայելով իր ծայրայեղ թուլութեան, մանու-
կը փորձում էր բռնել յատակի վրայ խա-
ղցող ժապաւինածե, նկարչագեղ ստւեր-
ներն ու շողերը, մեղրամոմի-պէս բարակ
մատներով չանգուում էր յատակը, շրջան-
ներ էր կատարում, ծափ դարկում ու քըր-
քջում նւազ, լալկան ձայնով:

Մայրը դիտում էր.

— Զգոյշ, ֆօրժիկ վար չընկնես.

Նրա ձայնի մէջ մայրական խնամոտ
հոգացողութիւնից դուրս անհանգիստ, երկ-
չոտ մի շեշտ կար. ասես մանկան փոքրիկ

սայլթաքումից կախւած լինէր մի ահագին,
մի սպառնալի վտանգ.

— Ես չեմ ընկնի մամա, պատասխանեց
երեխան թօթովիելով և կրկին անձնատուր
եղաւ իր խաղերին:

Մայրը շարունակեց իր ընդհատւած
մտածմունքները:

Իր ձեռքով նա խառնում էր անցեալի
մոխիրները և նրանց տակ նիրհող կայծե-
րը ճարճատում, բարձրանում էին և հրդե-
հը բորբոքում, փոթորկում էր էութիւնը:
Կրակը մխում էր վաղուց ի վեր, և
հրդեհը բորբոքեց յանկարձ...

* *

...Հրդեհը հանգչում էր մոխիրների տակ
և բռնկւեց յանկարձ:

Երէ՛ առաւտօտեան նա անցնում էր փո-
ղոցով, ինչպէս շատ անգամ անցել էր: Ո՞չ
մի տագնաաս, ոչ մի անհանգստութիւն չէր
խռովումնրա հողին: Նոյն իսկ ախորժ, ժըպ-
տուն տրամադրութեան մէջ էր: Օրը պայ-
ծառ էր, օդը՝ յստակ, աշնանային արեկ՝ դու-
րեկան: Եւ յետոյ՝ չէ նա գեղեցիկ էր ու
ջահել, ընդամենը քսան և եօթ տարեկան...
Նրա կայտառ, թեթև քայլւածքի, մարմնի
ալեծածան շարժումների մէջ այն անբռնա-

դատ վայելչութիւնը, այն խենթացնող նազանքը կար, որ յատուկ է միայն իսկապէս գեղեցիկ կանանց, գնում էր ինքն իր համար և իր հետ տանում էր հրապոյրների մի ցընորական աշխարհ, ու այնքան հայեցքներ...

Վարդագոյն շրթունքների վրայ մի ժըպիտ կար, գեղեցկութեան ու երիտասարդութեան ժպիտը... իր համար: Ամբոխի միջից անցնում էր, ինչպէս այծեամն անտառում, ուր բոլոր ծառերը գուրգուրում են նրան և ինքը՝ ոչ մէկին: Նա խաղացնում էր ուսինքաց հովանոցը, բայց արեից չէր պաշտպանւում. հաճելի էր զգալ երեսին մեղմ ձառագայթները, որոնք խտադում էին նրա նուրբ մորթին հեշտալի համբոյրի պէս: Յիշեց սակայն՝ որ ամուսինը միշտ պատւիրում էր նրան, պաշտպանել իր քնքոյշ մորթին արեից, յիշեց ու բարակ, բոսորային շըրթունքներով հեգնական շարժում արեց:

Ժպիտը խամրեց...

Կանգ առաւ զգեստեղէնի խանութի առաջ, ուր ցուցագրւած էին եղանակին պատշաճ նորութիւններ: Նայում էր երկար: Նրա ուշագրութիւնը գրաւեց ճապոնական տարագի մի վերնազգեստ. յիշեց, որ ամուսինը սիրում է նրան տեսնել արտասովոր, նորահնար զգեստների մէջ և կրկին շրթունք-

ների վրայ խաղաց նոյն հեգնութիւնը – ըգգեստ գնելու միտքը թողեց:

Փոքրիկ տղայի մի սիրուն ձեռք զգեստ ընկաւ աչքին, երեք չորս տարեկանի յարմար: «Ժորժիկին», մտածեց նա, բայց նա այնպէս նիհար, այնպէս անոյժ է խեղճիկը. բժիշկը պատվիրել է յատուկ զգեստ պատրաստել տալ նրա համար: Ու ախրութեան մի քօղ իջաւ դէմքին, որ ժորժիկն այնպէս նիհար է, այնպէս թուլակազմ:

Հովանոցը պատացը ուսին և առաջ անցաւ:

Արտասովոր մի շարժում կար դէպի մեծ հրապարակը:

Անորոշ ու գորշ մի զանգւած՝ երերուն համաշափայլւածքով մեծ ծառուղիով դանդաղ իջնում էր դէպի հրապարակ:

Հասան.

Մի քանի զինւորներ շրջապատած տանում էին մի հատիկ կալանաւոր: Անօրինակ ոչինչ ըլկար: Համարեա ամեն օր միենոյն փողոցներով ցեխերի ու աղբերի միջից տարւում էին ամեն կարգի կալանաւորներ մերթընկճւած ու վախկոտ, մերթ հպարտ ու համարձակ, և մերթ հեգնօրէն ցասկոտ մարդիկ, որոնք անցնում էին համարեա աննըկատելի. սովորական երկոյթ էր: Միայն փո-

դոցի թափառաշրջիկ մանուկներն էին մի վայրկեան վազում նրանց յետելից, ապա ցըրիւ գալիս քրքջալով։

Այսօր սակայն իրարանցումն ու հետաքրքրութիւնը մեծ էր։

Բոլորը վազում էին դէպի հրապարակը. բոլոր հայեացքներն ուղղւած էին դէպի մըռայլ թափօրը. գործի մարդիկ անգամ մի վայրկեան կանգ առած մայթերի վրայ՝ դիտում էին. խանութպանները գլուխները դուրս հանած դռներից՝ թաթերի վրայ էին բարձրանում կալանաւորին լաւ տեսնելու համար. ոմանք՝ աւելի հետաքրքիրները, հեռվից քայլում էին զինւորների հետ, ուրիշները առաջ էին անցնում, անկասկած իրանք էլ չիմանալով ինչու համար։

Ընդհանուր հետաքրքրութիւն ու շփոթէր. ինչ որ խօսում էին, ինչ որ հաղորդում իրար կիսաձայն և գլուխներն օրօրելով։

Ամենքի հետ նաև Սօֆիան կանգ առաւ մայթի վրայ և սպասում էր, մինչև կալանաւորի թափօրը անցնի առաջից։

Եւ սւինների կուռ շարքը .գլուխներից բարձր, արևի տակ վայլվլելով, օրօրւում էր, նեղանում, լայնանում։ Ամբոխի աճող հետաքրքրութիւնից դժգոհ՝ զինւորները գաժանօրէն մռմռում էին, աւելի պիհնդ սղմում

հրացանների կոթերը և կիտած յօնքերի տակից՝ խոժոռ հայեացքներ նետում այս ու այլ կողմ։

Ահա նրանք մօտեցան. ահա արդէն անցնում են Սօֆիայի առաջից. զինւորներն աւելի էին, քան հարկաւոր էր մի մարդ տանելու համար. «Անկասկած խիստ կարևոր կալանաւոր է, վտանգաւորներից», մտածեց Սօֆիան. թաթերի վրայ բարձրացաւ լաւ տեսնելու համար, նայեց և յանկարծ... ասես մէկն ուժգին խփեց նրա ծնկներին, որոնք դողդողացին, Սօֆիան երերաց, թեթև ձիչ արձակեց, յետ յետ քաշւեց դէպի պատը, ձախ ձեռքով սիրտը սղմած, որ խելայեղօրէն թրպրտում էր կրծքի տակ. ապա փորձեց նորից բարձրանալ, նորից տեսնել այդ դէմքը, բայց ուժերը դաւաճանեցին նրան։ Գունատ ու դողդոջուն՝ նա աջ ձեռքով վակեց մթագնող աչքերը և ձախ արմունկով յենւեց պատին չ'ընկնելու համար ու մնաց քարացած։ Սւինների միջից անխռով ընթացող այդ գունատ, բարեկազմերիտասարդ նա էր, Սուրէնը իր առաջին և միակ սիրոյ անզուգական առարկան։

Մի վայրկեան, միայն մի զարհուրելի վայրկեան—որ վայլվլի պէս վառեց ու անցաւնրանց հայեացքներն իրար փարեցին

քոյլը բոցերի պէս. Սօֆիան չքնաղ երազի պէս տեսաւ այն աչքերը, որոնք մի օր փոթորկել էին նրա կուսական հոգին և որոնք այսօր էլ նոյնն էին, ինչպէս շատ տարիներ առաջ: Տեսաւ... ու կարծես սասանեցուցիչ կայծակ ձայթեց նրա գլխին, շշմեցրեց և մի ուժեղ ձեռք բռնեց նրա թրթը. ուստ սիրտը, բոլոր թափով սղմեց, և բաց թողեց, որ հանդարտ արնի:

Եւ նա արնում էր այդ խեղճ, այդ վիրաւոր սիրտը...

Ահագին ուխորունկ յուզմունքից միշտ կուրծքը սղմած՝ նա փորձեց փախչել, շուտով ծածկւել, բայց ոտները չը հնազանդեցին, մնաց մեխւած իր տեղում, դողդողալով զարկւած թոչունի պէս. Հեռացաւ արդեօք նա... զլուխը բարձրացրեց, երկշոտ հայեացքը ուղղեց դէպի այն կողմը, ուր տարան նրան... աւինների շղթան պաղ ցոլքեռով օրօրւում էր արեի շողերի տակ և զինուրների շարքի միջից մերժ ծածկւելով, մերթ բացւելով՝ երկում էր նրա թիկունքը, զլուխը, պարանոցը:

Ահ, գէթ յետ նայէր մի անգամ... Սօֆիան զգում էր, որ նրա հայեացքին, նրա աչքերի բոցոտ փայլին այլ ևս չի դիմանայ, կը ճշայ ահագին ձայնով և կը նւաղի, բայց



և այնպէս ուզում էր, որ պահանջման չէր նայում, գնում էր նոյն հասանալի և մաշափ քայլերով, հեռանում էր աւելի և աւելի. Սօֆիան բերանաբաց, հևալով, աչքերը չուծ՝ նայում էր նրա յետելից, զգում էր, թէ ինչպէս իր կուրծքը դատարկւում է և իր էութեան լաւագոյն մասը քամւում, եթերանում էնրայետելից... Գոնէ յետ նայէր, էլի մի անգամ... տէր Աստւած. միթէ չի նայի, մըմնջում էին նրա շրթունքները, միթէ չի նայի...

Եւ նա յետ չը նայեց...

Գնում էր զլուխը բարձր, սև, երկար մազերը փռած հպարտ պարանոցին, գնում էր այնպիսի քայլւածքով, որ ասես զինուրների հրամանատարը լինէր և ոչ կալանաւոր: Դարձեալ մի քանի քայլ և նրանք ծածկւեցին հեռաւոր փողոցի անկիւնում:

Կերջացաւ... այլիս ոչ օրն էր պայծառ, ոչ երկինքը յստակ, և ոչ արևն անուշ. նա այն սէգ կալանաւորը տարաւ բոլորը:

Սօֆիան խորը շունչ առաւ, հովանոցը գլխին քաշեց, ոչ ոքի չը տեսնելու համար և դիմեց դէպի տուն: Շտապում էր ինչպէս մի ծանր վիրաւոր, որ աշխատում է վայրկեան առաջ վէրքը կապել տալ: Հին խորունկ վէրքը, որ բացւեց յանկարծ, որ արնում էր



կրծքի տակ աշխարհից ծածուկ:

Հեինկ տուն հասաւ. շտապով դէն ըլպրտեց հովանոցը, գլխարկն ու ձեռնոցները, նետւեց անկողնի վրայ, դէմքը ձեռներով ծածկեց և յանկարծ կուրծքը փուլ եկաւ. նա երկար, երկար լալիս էր. Խորունկ հեկեկոցից նրա ուսերն ու թիկունքը ցնցւում էին, արցունքը հոսում, թրջում էր բարձը և սենեակի կիսախաւար մենութիւնը քրոջ պէս գրկում էր նրա հեծեծանքն ու ծածուկ վիշտը: Երիտասարդ կինը սգում էր իր անցած երջանկութիւնը, որի յուշերը սուր փշերի պէս այսօր խոցոտեցին, արնոտեցին նրա սիրտը:

...Ամքողջ գիշերն անքուն անցրեց. ճական այրուում էր. աչքի առաջից անցնում էին զինւորները, սւինները և նրանց մէջ նա, իր Սուրէնը, բարձրահասակ ու բարեկազմ, նուրբ, ազնիւ գիմագծերով, կրակոտ, հմայիչ աչքերով այն տղամարդը: Եւ յետոյ այն քայլածքը, որի մէջ այնքան անբոնադատ վայելչութիւն, այնքան անարւեստ արիութիւն կար: Ութ տարուց ի վեր չէր տեսնել, ուխտել էր երբէք չը տեսնել, ու յանկարծ տեսաւ սւինների մէջ... այս ի՞նչ եղաւ, ի՞նչ անել... անկողնի մէջ նա տապակւում էր տօթից, կոկորդը սղմուում, խեղդւում էր.

Զարհուրելի գիշեր անցրեց: Միայն լուսաբացին քնեց և շուտով զարթեց:

Լուսաբացը նրան հանգստութիւն չը բերեց. թախիծը կծկւել էր անկողնի կողքին, որ աչքերը բաց անի թէ չէ, կրկին բռնի նրա սիրտը և սղմի, սղմի: Երկար պարկած մնաց, երկար խորհեց այդ ճակատագրական անակնկալի մասին, որ այնպէս անողորմ կերպով եկաւ տակն ու վրայ անելու նրա կեանքը, որ քաշեց ու շորթեց հին վէրքի վիրակապը:

Եւ այժմ ընդունարանում նոյն պատկերը, նոյն խոհերը նրան դադար չեն տալիս մի վայրկեան: Փոթորկւած կրծքի տակ մի բան ուռչում, բարձրանում է. նա դժւարութեամբ է զսպում արցունքը երեխայի ներկայութեամբ. զգում է, որ երեկւայ պէս մի ահագին, մի սրտապատառ ձիչ եռում է կրծքի տակ. նա ճգնում է խեղդել այդ ճիշը, թաշկինակն է սղմում ատամների տակ, շըրթունքներն է կծոտում.

— Փօրժիկ, Փօրժիկ, արի, ինձ մօտ.

Երեխան վերկացաւ և երերալով դիմեց գէպի մայրը, որ զըկեց նրան, բարձրացրեց ու դըկեց ծնկան վրայ:

— Փօրժիկ, դու շատ ես սիրում մայրիկին.

— Մամա ես քեզ շատ եմ սիրում,

Մայրը համբուրեց նրան ջերմագին,
սղմեց կրծքին խանդաղատանքով, յետոյ նա-
յեց աչքերին, խորը, խորը ու երկար:
Ժօրժիկ, ժօրժիկ, մայրիկը լաւն է:
—Հա, մաման լաւն է.

Մայրը վերստին սղմեց նրան գրկի մէջ
խելայեղօրէն, կատաղաբար. սրտում զար-
թած բոց զգացմունքը չը գիտէր ուր թա-
փել և տրորում էր իր բազուկների մէջ զա-
ւակի փխրուն մարմինը: Ժօրժիկը նայում
էր մօրը զարմացած, նրա խոշոր աչքերը էլ
չէին թարթում,
—Մամա, մամա...

Երեխայի ձայնի մէջ վախ կար:

Սօֆիան զանգը տւեց. եկաւ աղախինը,
օրւայ լրագիրը ձեռքին, որ զբեց սեղանի
վրայ:

—Տար, երեխային պարտէզ, ասաց նա:
Աղախինը դուրս գնաց երեխայի հետ:

Սօֆիան խլեց թերթը, շտապ, տենդոտ
շարժումներով բացեց, որոշ լուր փնտրողի
ուշադրութեամբ արագ անցաւ առաջին երես-
ները, կանգ առաւ երրորդ երեսի վրայ, կար-
դաց լուելեայն մի քանի անգամ... այդ նրա
մասին էր, խուզարկութեան ու բանտար-
կութեան մասին. թերթը անյուսօրէն ցած թո-
ղեց՝ ծնկներին, սիրտը փղձկաց ուժգնորէն:

Սօֆիան վերկացաւ և վերստին ծածկ-
ւեց ննջարանում ամբողջապէս անձնատուր
նրան, որին տանում էին զինւորները: «Սու-
րէն, Սուրէն» կանչում էր նա մեղմօրէն՝
ինչպէս տերեկի շշնջիւնը ուշ գիշերին թեթև
հովի առաջ, ինչպէս խոտերի տակ գալար-
ւող ջրերի հեծեծիւնը: Եւ այնքան տարի-
ներ հոգու խորգում հանգչող սէրը զարթեց,
ձգձգւեց, բարձրացաւ, բռնեց նրա ամբողջ
էութիւնը, սիրտը հալւեց այդ զգացմունքի
ջերմութիւնից ինչպէս մոմ, ախորժ ու հեշ-
տալիր մի դող անցաւ ամբողջ մարմնով, սե-
նեակի կիսախաւարն ու լոռութիւնը թանձ-
րացան, մարմին առան, փարեցին նրան,
սղմում են, տաք, դողդոջուն գրկի մէջ...
այդպէս միայն նա գիտէր գրկել... Սօֆիան
աչքերը կիսախուփ հեռում է անուշ վշտի ու
հեշտանքի գերագոյն հաճոյքից փոխ առ
փոխ...

«Սուրէն, Սուրէն...»

Սքանչելի՛, կախարդական պատրանք...
Նա աչքերը բացեց, ճակատը շիեց, ըն-
կաւ փափուկ բազմոցի մէջ և վերստին ան-
ցած կեանքի օրերը, որպէս հորիզոնի վրայով
տարւող ամպերի կարտան՝ շարան-շարան
անցան աչքի առաջից:

Անցնում են նրանք խելագար վազքով

բեռնաւորւած իր կուսական յոյզերով ու
երազներով, տանում են այն ցնորական կեան-
քը և ամենքը միասին գլորւում են բաղե-
րի մութ անդունդը:

Այդ անդունդը...

Սօֆիան կոացած այդ անդունդի վրայ,
նայում է հեալով, աչքերը չուած, փնտրում
է, գտնում է բաղդերի ժխորի մէջ սեփական
կեանքը, վիրաւոր, արիւնոտ իր կեանքը,
ինչպէս զարկւած, կիսամեռ այծեամ, որ թըր-
պրտում է օրհասի ճիրաններում:

Նայում է...

Ո՛, ինչպէս կուզէր մի հօր, գերմարդ-
կային ճիշով յետ կանչել, դուրս քաշել խոր-
տակումների, անդարձ աւերումների այդ մը-
րըրկի միջից իր խեղճ, իր վիրաւոր կեանքը,
որ անխորհուրդ, գունատ սահեց ու ընկաւ
փշուր փշուր, ինչպէս կուզէր ապրել վերս-
տին այն տաս տարին, նրա իւրաքանչիւր
վայրկեանը ինչպէս բոց վառել, կրակէ հող-
մերի հետ տարւել սարսափների վրայ. կու-
զէր խելայեղօրէն ապրել սոսկումը, տան-
ջանքը, գերագոյն տանջանքը սիրած տղա-
մարդի հետ, և ապա նրա հետ վերստին
անդարձ գլորւել ոչնչութեան դիրին ու փո-
շիանալ: Նա այնպէս կուզէր ճակատագրի
ձեռքից շորթել այդ կեանքը, գրկել իր ար-

շալոյսը և շաղ տալ նրա ցոլքերը տառա-
պողների, հալածականների, զրկւածների ճա-
կատներին...

«Իմ կեանքը. իմ կեանքը, յետ տուր իմ
կեանքը...»

Ումի՞ց էր պահանջում, ում էր աղա-
զակում բազուկները անյուսօրէն տարածած
օդի մէջ.

Եւ կուրծքը վերստին փուլ եկաւ, տոա-
լուից խեղդւած ճիշը պայմեց...

«Սուրէն, Սուրէն... ուհ...»

Լալիս էր, արցունքները մարգարիտ շա-
րաններով գլորւում էին այտերի վրայից,
և չը զիտէր ում համար էր լալիս, Սուրէնի,
որ քայլում էր սւինների միջից, թէ իր վի-
րաւոր կեանքի համար, որ թրպրտում էր
բաղդերի ժխորի մէջ...

* *

Եւ այդ կեանքը...

Տաս տարի առաջ էր. Սօֆիան՝ կենսու-
րախ, գեղանի աղջիկ, Սուրէնը՝ տակաւին
ուսանող, և նրանք հանդիպեցին համալսա-
րանական քաղաքում: Սօֆիան ուսանելու էր
եկած և հէնց սկզբից յափշտակուեց նրա
սիրով իր կայտառ, կենսաթրթիո հոգու բո-
լոր խանդով:

Նա սիրում էր Սուրէնին նրա բոց ու գիւտական աչքերի, նրա թաւ երկար մազերի և մանաւանդ նրա ապօլօնեան ճակատի համար, ուր այնքան իմացականութիւն ու ազնիւ արիութիւն կար: Հուժկու ու մարմնեղ երիտասարդի ամեն մի շարժումը, ամեն մի խօսքը, մանաւանդ նրա հայեացքը իրենց տիրական առնականութեամբ այն աստիճան արբեցուցիչ էին, որ Սօֆիան նրա ներկայութեամբ միշտ ընկնում էր երազական, հեշտալի վիճակի մէջ:

Երբ որևէ ուսանողական ժողովում նա ոտքի էր ելնում, յետ յետ տանում ճակատից գանգուրները և խօսք առնում, Սօֆիան յուզմունքից բերանաբաց հեռում էր, աշխատելով կլանել նրա իւրաքանչիւր խօսքը, խզել և իր հոգու մէջ թագնել նրա հայեացքից ցայտող բոլոր կայծերը և մանաւանդ նրա աջ ձեռքի գեղեցիկ, տիրական շարժումը, որով Սուրէնը գիտէր այնպէս իշխելու ընկճել իր ունկնդիրներին: Սօֆիան հաւատացած էր, ոչ ոք այնպէս չի հասկանում նրան, որպէս ինքը, և երջանիկ էր, որ այդ այդպէս է. Սօֆիան ուզում էր որ նրա հոգու բանալին իր ձեռքում միայն լինի, որպէս զի ինքը մեն մենակ իշխի նրա ներքին աշխարհում, ինչպէս մենաւոր ու

հպարտ կարապը կապուտակ լճի վրայ: Սիրում էր, սէրը փոխադարձ էր, այդ նա շատ լաւ գիտէր: Թէկնրանք դեռ ոչ մի բառով չէին արտայայտել իրենց հոգին փոթորկող զգացմունքները, բայց հայեացքները պերճախօս ու սիրազեղ, ժպիտները՝ քնքոյշ ու նշանակալից, մանկական ներվայնութիւնը առանց պատճառի, մէկի յանկարծական մելանխոլիան և միւսի՝ քրքիջը, ձեռքերի շերմ հալումները, թեթև դողը ոտներից մինչեւ մազեր, այլ ևս խօսքի տեղ չէին թողնում: Եւ մի նուրբ, անխսան հաճոյք էին զգում լըռելեայն խաղալ այդ համը, բայց գողաբիկ զգացմունքի հետ. չէին շտապում սովորական բառերովյետ քաշել նրան ծածկող թափանցիկ շղարշը, որ միշտ այնքան խորհըդաւոր և այնպէս դիւթիչ է զարձնում մատադ սրտերի սիրային զեղումները:

Սիրում էր բուռն սիրով, սէրը փոխադարձ էր, ինչու էր սակայն երջանիկ միայն Սուրէնի կողքին, նրա հետ, զբօսանքի ժամերին. բայց հէնց որ մենակ էր մնում, կասկածի սև օձը գլուխը բարձրացնում էր նրա հոգում և անորոշ վախը սև ամպի պէս սըղմում էր նրա կուրծքը: Այդ մենութեան ժամերը... երբ Սօֆիան քունքերն ափերի մէջ, ժամերով նստում էր ու մտածում, մտածում

անտառը փոթորկի ժամերին, ինչպէս հսկայ ջրվէժը, որ փրփուրէ ամպերով գահավիժում է անդունդը, ինչպէս իր անծայրածիր ծովը իր հազար ու մի յեղյեղումներով:

«Ծռվ, ծռվ, մըմնջում էր նա, ծռվ և նրա պէս անհուն, և նրա պէս հազար ու մի գաղտնիքներով...»

Ո՞հ, այդ գաղտնիքները. ինչպէս կուզէր Սօֆիան նրանց գաղտնիքն իր ձեռքում ունենալ, և նրանց հետ Սուրբնի խոհերը, նրա երկաթէ կամքը, ամբողջ կամքը:

Պայքար էր իր և աշխարհի մէջ և պայքարի առարկան նա էր, այդ գարմանալի երիտասարդը, իր ուխտածի ճակատով:

Ո՞չ, Սօֆիան չի զիջի. սէրը ամենակարող է և նրա իրաւունքից վեր ու նւիրական՝ աշխարհում ոչինչ չըկայ.

Ո՞չ: նա չի զիջի. աշխարհի դէմ նա ունի իր խորունկ դգացմունքը, իր հրապոյրները, իր չքնաղ կանացիութեան անդիմադրելի հմայքը, իր աշքերի բոցը, որով հըրդեհ կը վառի Սուրբնի հոգում...

Ո՞չ, աշխարհը նրա առաջ անգօր է, նա չի կարող խլել Սուրբնին...ևսակայն վերստին յուսահատական ճիշը՝

«Սուրբն, Սուրբն, ինչու դու այդքան

սարսափելի ես և այդքան հրապուրիչ միաժամանակ»...

* *

...Զբօսնում էին և բաց դաշտի մէջ փոթորկի բոնւեցին:

Անձրև չը կար տակաւին, բայց մութ ամպերը որոտում էին և կայծակը ճայթում էր անընդհատ: Սօֆիան վախում էր, և թոյլի բնազդով աշխատում էր մօտ, շատ մօտ բայլել երիտասարդին: Քանի մօտենում էր փոթորիկը, Սօֆիան այնքան աւելի էր դողում երկիւղից, աւելի էր սղմւում նրա ուսին: Չէր համարձակուում թէն անցնել, այդ դեռ երբէք չէր պատահել, կանացի ամօթխածութիւնն արգելում էր նրան առաջինն անել համարձակ քայլը, ինչն է արգելում Սուրբնին... նա մտածկոտ էր, ասես չէր լսում ամպերի որոտը, կայծակների խլացուցիչ ճայթիւնը, չէր նկատում Սօֆիայի ծայրայեղ յուզմունքը: Այդ անտարբերութիւնը խորապէս վշտացնում էր Սօֆիային:

—Շուտ, շուտ գնանք, շտապեցրեց Սօֆիան, փոթորիկը...

Նոյն վայրկեանին, հէնց նրանց գլուխների վրայ կայծակը ճայթեց այնպիսի խըլացուցիչ որոտով, որ ասես երկինքը փուլ

եկաւ, շրջակայքը մի վայրկեան բոցավառ-
ւեց ցասկոտ, անհաճոյ փայլով, ծառերն ու
կանաչ ըլուրները կարծես սարսափից գու-
նատւեցին ու սարսուացին, իսկ Սօֆիան սոս-
կումի ճիչ արձակեց ու երկու ձեռքով դըր-
կեց դլուխը.

—Մի վախենաք, չէ ես ձեզ հետ եմ...
ասաց Սուրէնը և առանց սպասելու թոյլ-
տւութեան, իր այն առնական շարժումով,
որ այնքան գրաւում էր Սօֆիային, մեկնեց
աջ ձեռքը, գրկեց նրա իրանը, թափով սըղ-
մեց իր կողքին, ծածկեց վերարկուի փէշով,
իսկ ձախ ձեռքը առջեկից բերելով՝ ձգեց նրա
պարանոցով։ Սօֆիան քնքշութեամբ ու դոդ-
դողալով գլուխը կուցրեց նրա ուսին, անզօր
ու վախլուկ երեխայի պէս կծկւեց, փոքրա-
ցաւ, ու մեղմիւ թրթում էր նրա գրկում։
Այժմ նրանք քայլում էին տենտօրէն իրար
սղմւած, ու Սօֆիան զգում էր նրա մար-
մինը, նրա ուժեղ բազկի խաղերը, զգում էր
նրա ջերմութիւնը, որ այրում էր իր ձախ
կողմը, տարածւում, բռնում էր ամբողջ մար-
մինը ախորժելի դողով։ Նրանք քայլում էին
համաշափ, կայտառ ու թեթե, ասես մի մարդ
քայլելիս լինէր...

Կայծակը ճայթում էր աւելի թափով,
ամպերը որոտում էին աւելի ահաւոր, եր-

կինքը՝ շանթերից պատառ պատառ, տնքում
էր նրանց գլխին—ինչպէս արնաքամ վիրա-
ւոր, երկիրը խուլ արձագանք էր տալիս նը-
րան, բայց Սօֆիայի փոյթը չէ այլ ևս...

—Ել չէ՞ք վախենում...

Ա՛, անիրաւ, նա լաւ գիտէ, որ Սօֆիան
այլ ևս չի վախենում, ի՞նչ է հարցնում։
Պատասխանի փոխարէն Սօֆիան սղմւում է
նրա կողքին, աշխատում է մօտ, աւելի մօտ
տանել իր գլուխը նրա դէմքին, խառնել իր
շունչը նրա շնչին, փարել, ոչնչանալ և միե-
նոյն ժամանակ հաճոյքով զգում է, թէ ինչ-
պէս նրա ուժեղ բազուկը սղմում է, սըղ-
մում է իր իրանը...

Եւ ինչպէս լաւ է, լաւ...

Կայծակը վերստին ճայթեց անօրինակ
որոտով, Սօֆիան ցնցւեց Սուրէնի բազուկ-
ների մէջ, ինչպէս բռնւած թռչուն, որ դուրս
պլծնել է ուզում։

—Վախենում էք... չէ ես ձեզ հետ եմ...
և Սուրէնը աւելի պինդ սղմեց նրան իր
կողքին։

—Ո՛չ, ես այնպէս... ես չեմ վախե-
նում... ձեզ հետ... չեմ վախենում, իհարկէ...

—Օ՛, ո՛չ, նա չի վախենում, թող ողջ
երկինքը բոց կարի և կայծակների անձրւ
տեղայ նրանց գլխին՝ այսպէս նրա գրկի մէջ

Սօֆիան պատրաստ է մոխիր դառնալ, միայն
նրա հետ, նրա հետ...ու նա սղմուռմ է երի-
տասարդի կողքին, փարում է պինդ, պինդ,
դողում է անսաելի հաճոյքից: Եւ կուզէր,
որ այս ահաւոր փոթորիկը երբէք չը դադա-
րի, որ այս ձանապարհը վերջ չառնի...

Տեղատարափ անձրեւ շփեց և անցաւ
նրանց վրայով:

— Ֆէա, վախլուկ ֆէա, ասաց Սուրէ-
նը, կուանալով ու շեշտակի նայելով նրա աշ-
քերի մէջ:

Այդ հայեացքը, ուր անհուն քնքշու-
թեան ու խորունկ սիրոյ հետ միաժամա-
նակ մի վիշտ կար, անորոշ, տարտամ վիշտ,
որ խաղում էր նրա բիբերի վրայ: Նւաղած,
աչքերը կիսախուփ, շրթունքները կիսաբաց՝
Սօֆիան սպասում էր երիտասարդի համ-
բոյրին, ինչպէս վարդի կոկոնը սպասում
է վաղորդեան առաջին շողին փթթելու հա-
մար. սպասում էր մեղմիկ հևալով, քնքշօ-
բէն...

— Ֆէա, ֆէա... և երիտասարդը բաց
թողեց նրա իրանը... առանց համբոյր. փո-
թորիկը դադարում էր.

Խորապէս դառնացած այդ յուսախա-
բութեամբ, Սօֆիան հազիւ էր զսպում ար-
ցունքները, որոնք եռում էին կրծքի տակ:

«Ո՛չ, նա չի սիրում ինձ», մտածում
էր Սօֆիան շրթունքները կծոտելով. նրա
կանացիութիւնը վիրաւորւած էր մինչև հո-
գու խորքը:

Նրանք քայլում էին կողք կողքի, լը-
ռութեամբ, և իւրաքանչիւրն ըստ երևոյ-
թին անձնատուր իր խոհերին. Երեկոյեան
մշուշն իջաւ, իջաւ պարուրեց դաշտու ձոր.
ամայութեան ու լռութեան մէջ նրանց ոտ-
նածայներն այժմ լսում էին ուրոյն-ուրոյն,
խորթացած իրարից:

— Դուք սարսափելի էք, ասաց յանկարծ
Սօֆիան կերկերուն ձայնով. Սուրէնը նա-
յեց նրան զարմացած, բայց խաւարը չը թո-
ղեց տեսնել դէմքը.

— Զէի սպասում... ես սարսափելի եմ,
կրկնեց երիտասարդը ծիծաղելով:

Այս, դուք սարսափելի էք...

— Եւ ես միամիտս հաւատացած էի, թէ
գոնէ ձեզ համար ես սարսափելի չեմ և մի
բան արժեմ. Սուրէնը դարձեալ ծիծաղեց:

— Մի կեղծէք, այդ ձեզ չի սազում,
դուք լաւ գիտէք, թէ ինձ համար ի՞նչ ար-
ժէք...բայց և այնպէս դուք սարսափելի էք...
ասացէք, ինչո՞ւ էք դուք այդպէս, ինչո՞ւ...
Սօֆիան կանդ առաւ, նրա ձայնը կերկերաց
ու խզաց, գլուխը քաշ ձգեց և հազիւ կարո-

դացաւ զսպել արցունքները:
— Ես ձեզ չեմ հասկանում. Սուրէնը
դարձեալ կեղծում էր.
— Ձեզ հետ... ձեզ հետ անկարելի է...
— Վիճել... Սուրէնը կատակում էր ժըպ-
տալով:

— Ո՞չ, Սօֆիան ոտքը գետին զարկեց
անհամբեր երեխայի պէս, ձեզ հետ, ձեզ հետ
անկարելի է, հասկանո՞ւմ էք... ինչու դուք
ուրիշների պէս չէք, որոնք այնպէս սիրում
են ապրել, և գիտեն ապրել, վերջացրեց Սօ-
ֆիան համարեա ճշալով:

— Կարծո՞ւմ էք մի՞թէ որ ես չեմ ու-
զում ապրել.

— Ո՞չ, դուք չէք ուզում ապրել, դուք
հէնց նրա համար էք սարսափելի, որ չէք ու-
զում ապրել... դուք... ով գիտէ՝ ի՞նչ... ձեր
կեանքը...

— Ուզում եմ ապրել, հաւատայնում եմ
ձեզ, ինչպէս ամենքը. միայն ապրելու ըմ-
բռնումը մարդուց մարդ՝ տարբեր է: Վայր-
կեաններ կան, որոնք յաւիտենականութիւն
արժեն: Նայեցէք այս թիթեռնիկներին-ե-
րիտասարդը ցոյց տւեց առաջին պատահած
լապտերը քաղաքի սահմաններում— նայե-
ցէք սրանց, ամենքն էլ խոներամ ու խելա-
յեղօրէն դիմում են դէպի բոցը, իրար հըր-

հրում, իրարից առաջ են անցնում և... այր-
ւած թևերով վար են թափւում ու մահա-
նում: և նրանք յաւիտեանն ապրում են մի
վայրկենում:

Սուրէնի խօսքի մէջ խորունկ համոզ-
մունքի հետ հնչւում էր նաև խորունկ վշտի
շեշտը.

— Յաւիտեանն ապրել մի վայրկենում,
կըկնեց Սօֆիան մտածկոտ, ապա յանկարծ
ըմբռնելով այս խօսքերի բոլոր ճակատա-
գրական իմաստը, յետ ձգեց գլուխը ու բա-
ցականչեց.

— Ո՞չ, ես ատում եմ մահը... գեղեցիկ
մահ չը կայ... ապրել, ապրել, որովհետեւ ես
ծնւել եմ ապրելու համար, ամենքը ծնւել
են ապրելու համար, թող ապրեն, ես գործ
չունեմ, ես ուզում եմ ապրել, ապրել. ձայնը
վերստին կերկերաց և նա յանկարծ թողեց
իր ուղեկցին, շտապով առաջ անցաւ ու ան-
յայտացաւ քաղաքի փողոցներում:

Սուրէնը կանգ առած՝ նայում էր նրա
յետեից խորը վշտով...

Այն գիշեր Սօֆիան դարձեալ երկար,
երկար լաց եղաւ, թէ ինչու՝ իր սիրած տը-
ղամարդը այնքան հրապուրիչ է, և այնքան
վախ է ներշնչում միաժամանակ:

Եւ այդ զարմանալի երիտասարդը նրա
ճակատազրի տէրն էր, որից բաժանւել չէր
կարողանում:

Աշնանային մի պայծառ օր նրանք եր-
կար թափառում էին քաղաքի շրջակայքի
անտառապատ ձորակներում: Երեխաների
պէս վազվում էին մի ուշացած ծաղիկ քա-
ղելու համար, ապա հրհրում իրար և թա-
ւալ տալիս կանաչների վրայ քրքջալով: Սօ-
ֆիան թօշնած տերեներ ու ծաղիկներ էր
ցանում Սուրէնի գլխին, կամ խլում էր
նրա գլխարկը ձգում, հեռու թաւուաի մէջ,
չարաձճի մանկան նման յետեկից զաղտա-
գողի մօտենում մազերն էր քաշում, կամ
վտակի եզրով անցնելիս՝ բռնով ջուր էր
ցանում նրա վրայ՝ ապա վազում, թագն-
ում խիտ մացառների մէջ:

—Ֆէա, ֆէա, կրկնում էր Սուրէնը,
երբ գտնում էր նրա թագստոցը և բըռ-
նում քնքշութեամբ. Սօֆիան նկատում էր
այդ վայրկենին նրա դիւական աչքերի կը-
րակը, նրա բորբոքւած այտերն ու եռուն
յոյզերից ուռած կուրծքը. տեսնում էր, այդ
իր յաղթանակն էր և երջանիկ ու խնդա-
գին դուրս էր պըճնումնրա ձեռքից, փախ-
չում քիչ հեռու, քրքջալով իր հնչուն, խան-
դագրգիռ ծիծաղով:

—Եղնիկ, վախլնւկ եղնիկ, ասում էր
Սուրէնը.

—Ա՛յ, կանյայտանամ անտառում եղ-
նիկի պէս և դուք ինձ այլ ևս երբէք, եր-
բէք չէք գտնի:

—Ո՛չ մի թաւուտ կամ մացառ, ոչ մի
ձոր կամ այր ձեզ ծածկել չի կարող ին-
ձանից:

—Ճշմարիտ... և Սօֆիան ծնօտը կա-
խում է կրծքին, ձեռքերը յետեւ ձգում,
թեթև կռանում առաջ, նայում կամարա-
կաղ յօնքերի տակից ժպտուն, սիրազեղ
հայեացքով, որ այնքան դուր էր գալիս
Սուրէնին ու այնպէս շփոթում: Եւ միայն
մի վայրկեան, մի կարճատեւ վայրկեան.

—Ապա նորից նայեցէք այդպէս.

—Ո՛չ, էլ չէք տեսնի. դուք խօմ նկա-
րիչ չէք.

—Իսկ ձեզ նկարել եմ.

—Ուր է նկարս.

—Դուք զիտէք ուր է, ինչու էք հարց-
նում:

—Ո՛չ, չը զիտեմ, ուր է.

Պատասխանի փոխարէն Սուրէնը ձախ
ձեռքը մեղմիւ դրեց սրաի վրայ... առաջին
խօսքն արտասանեց...

Լութիւն աիրեց. երկսով էլ տիրե-

ցին. մանուկներ էին, երբ վազվղում էին իրար յետելից, անհոգ մանուկներ, ընկճւեցին, երբ կեանքի հզօր ճիշը հնչւեց նրանց շրթունքներով։ իւրաքանչիւր երջանկութեան տակ դարանակալ անխուսափելի ցաւը կամացուկ զարթեց ու յօրանջեց։ Ծառերը մեղմիւ սօսափում էին նրանց գլուխների վրայ. կեանքից յոգնած բգէզները անձայն մեռնում էին թօջնած տերևների մէջ և չորացած խոտերը հեծեծանքով սգում էին անցած դարունը, որ այլ ևս երբէք, երբէք դառնալու չէր։

Նրանք քայլում էին լոռութեամբ ունըրանց խօհները նոյնն էին...»

Անտառի խորքից դուրս եկաւ մի կին, երկու փոքրիկ աղջիկների հետ. երեքով էլ նիհար, գունատ ու ցնցոտիների մէջ։ իւրաքանչիւր փէշի մէջ ինչոր բան ունէր փաթաթած, երեկի արմտիք, և ուսին ծառի մի մի չոր ճիւղ, կարիքի զաւակներն էին. ձմեռը մօտ էր, պէտք էր մի կերպ ապրել... իրենց բեռը քաշում էին լոռութեամբ, նոյն իսկ չը նայեցին անձանօթ զոյգին։ Բատ երկոյթին գոհ էին, որ փոքր արմտիք և մի մի չոր ճիւղ են ճարել ձմրան կատաղութիւնը մեղմելու համար։ Անցան. հազիւ մի քանի քայլ հեռացած՝ նրանց առաջը փա-

կեց անտառի ծեր պահապանը, Երեք խեղճերը կանգ առան և լոռութեամբ նայում էին խստաղէմ ծերունուն։

—Դարձեալ դժուք... ասաց պահապանը զայրոյթով և մօտեցաւ փոքրիկ աղջիկներից մէկին ու թափով քաշեց նրա ձեռի ճիւղը։ Երեխան բարձրածայն հեկեկաց։ Սուրէնը նրանց մէջ նետւեց.

—Լսեցէք բարեկամ, ասաց նա ձեռքը ծերունու ուսին զնելով, դուք չար մարդ չէք երեռում, ես ձեզ շատ եմ խնդրում չը վշտացնել այս խեղճերին, թող տանեն, մեծ բան չէ այդ երեք ճիւղը։

—Զգիտէք, թէ սրանք որքան են նեղացնում ինձ, մէկ չէ, երկու չէ, հարիւրներ են, և ամեն օր. յետոյ՝ ախր կալւածատէրը կայ, որ սրանց պատճառով սպառնում է ինձ դուրս անել. երեխաներ ունեմ պարոն, մի տուն լիքը երեխաներ։

—Երաւունք ունիս իմ բարեկամ, բայց այս անգամ շատ եմ խնդրում սրանց չը վշտացնել. շատ եմ խնդրում։

Ծերունին յետ քաշւեց. կարիքի թափորը առաջ շարժւեց. կինը երկու անգամ յետ նայեց լոռութեամբ և նրա աչքերից հոսում էին արցունքները։ Սօֆիան յենւած մի ծառի, նայում էր այդ տեսարանին.

Սուրէնը վերադարձաւ և նրանք առաջ շարժւեցին։ Սօֆիան լոռութեամբ խաղացնում էր ձեռքին մի կանաչ ճիւղ, Սուրէնը կամացուկ սուլում էր մի եղանակ։

— Այն կինը լալիս էր, ասաց յանկարծ Սօֆիան։

— Ծերունին ասաց նրանք մէկ չեն, երկու չեն, հարիւրներ են, կարող էր ասել միլիօններ են, պատասխանեց Սուրէնը։

Կրկին լոեցին։

Հասան լեռնային վտակին, որ սահանքներով իջնում էր նեղ անտառապատ ձորակով։ Պէտք էր անցնել, բայց դա այնքան էլ հեշտ չէր. աշնանային առաջին անձրեներից յորդացած, փոքրիկ վտակը դարձել էր մի գետակ։ Նա որոտում էր, մոմոռում զարկըւելով նեղ ափերին և ծառերի մերկ արմատներին։

Տեսարանը վեհօրէն գրաւիչ էր. ախորժարամադըռութիւնը վերստին համակեց նըրանց. ափերով առաջ շարժւեցին անցք գըտնելու համար։ Մացաների, ծառերի և քարերի մէջ գալարւող արահետը կանդ առաւ։ Հասան. այստեղ երկու խոշոր քար կար գրլորւած ջրերի մէջ, որոնք կամքջի տեղ էին ծառայում։ Հարկաւոր էր ցատկել նախ մէկի՝ ապա միւսի վրայ, ու յետոյ հակառակ ափը։

Սովորական, ծանօթ անցք էր, յաճախ էին տեսել, բայց այսօր գահավէժ ու սրնթաց ջրերը բարձրացած ու փրփրուն, զարկւում են քարերին ասես տեղահան հանելու համար։ Սօֆիային թւաց նոյն իսկ, որ այդ քարերն արդէն դողում են, արդէն շարժւում են։

— Անցնենք, առաջարկեց Սուրէնը։

— Օծ, այդ անկարելի է... ես վար կը ընկնեմ. ես վախենում եմ... Սօֆիան մօտեցաւ, աչքով չափեց տարածութիւնը և յետ յետ քաշւեց։

Սուրէնը ծիծաղում էր.

— Վախլուկ եղնիկ, այ, ես կը ցատկեմ առաջ և ձեր ձեռքից կը բռնեմ։

— Դուք էլ չէք կարող, կը նկնէք, տեսէք, քարերը դողում են։

— Լաւ, կը նկնէք միասին և ջուրը մեզ միասին կը տանի. Սուրէնը ժպտում է խորհրդաւոր կերպով։

— Ես չեմ ուզում ընկնել, չեմ ուզում, որ ջուրն ինձ տանի, և Սօֆիան կէս վախեցած, կէս ժպտուն հայեացքն ուղղում է երիտասարդին։

— Անգամ ինձ հետ...

— Դուք այնպէս ուժեղ էք, դուք կազմաւէք, ու կը թողնէք որ ես խեղուեմ...»

Սօֆիան դարձեալ ժպտումէ, դարձեալ իրանը
թեթևորէն առաջ ձգած, ձեռքերը յետ և նա-
յում է յօնքերի տակից, չարաճճի, խորա-
մանկ հայեացքով նայում է և սպասում...

Եւ սպասւած պատասխանը չուշացաւ:

Երիտասարդը զիխարկը յետ ձգեց ճա-
կատից, մի ոստիւն գործեց, ահազին բա-
զուկները տարածեց և մինչև որ Սօֆիան
ուշքի կը գար, գրկեց, բարձրացրեց նրան
երեխայի պէս իր կրծքին սղմած, և ուժեղ
թռիչքով նետւեց դէպի վտակը: Սօֆիան
մեղմիւ ճշաց ու փաթաթւեց նրա պարա-
նոցով: Սուրէնը՝ գեղանիւ ու բնքոյշ բեռը բա-
զուկներին, թափով թռաւնախ առաջին քարի
վրայ, յետոյ երկրորդի, ապա կանգ առաւ
վտակի մէջ տեղում, հեալով, բորբոքւած դէմ-
քով ու երջանիկ:

— Թէա, ձգեմ քեզ գետը տանի, շշն-
ջում էր նա Սօֆիայի ականջին:

— Զգիր, ձգիր... նւազած ուշակորոյս,
Սօֆիան գողգողում է գերագոյն հաճոյքից.
աչքերը կիսախուփ, շրթունքները կիսաբաց,
նա դէմքը սղմել է երիտասարդի կրծքին,
աներեակայելի հեշտանքով լսում է նրա սրտի
հզօր բաբախիւնը ինչպէս իր կրծքի տակ,
զգում է նրա ջերմութիւնը, որ հոսում, տա-
րածում իր մարմնի ամենամանրիկ թելերի

մէջ, շնչում է նրա առնական արբեցուցիչ
հեքը և շշմած, իսպառ թուլացած, ու ան-
գոր՝ քաշ է ընկնումնրա բազուկների վրայ:
Գետակը շարունակում է որոտալ, փրփրուն
կոհակները զարկւում են քարերին, կաթ-
նային ցնցուղները բարձրանում են ամպի
պէս ու պարուրում նրանց. այդ նուրբ շա-
մանդաղի մէջ, ծառերի հովանու տակ, կա-
տաղի սահանքների վրայ՝ երիտասարդը սի-
րային մի խենթ քմահաճոյքով շարունակում
է օրօրել իր չքնաղ բեռը, բոց աչքերը միշտ
նրա երեսին յառած... Եւ Սօֆիան անէա-
ցած՝ զգում է ինքն իրան մի ցնորական աշ-
խարհում, ուր յաւիտենական երաժշտու-
թիւնը գուրգուրում է նրա լսելիքը գերբնա-
կան մեղեղիներով: Մի անգամ, միայն մի
վայրկեան նա բացում է աչքերը տեսնում
է իր երեսին յառած Սուրէնի աչքերը, որ-
պէս զոյգ վառւած ածուխներ, որոնք թա-
փանցում են մինչև նրա հոգին, պաղ մշուշի
միջից զգում է նրա գոլ, բուրաւէտ շունչը
և յանկարծ նրանց շրթունքները միանում
են անհուն, բոց համբոյըրով: Սօֆիան աչ-
քերը վակում է, տիեզերքը շնչում է, նը-
րանք իրար պլլաւած՝ լուծւում եթերանում
են, մնում են միայն հոգիներն ի մի ձուլ-
ւած, և ալիքների խօլ երաժշտութիւնը, որ

լուռմ է մի այլ գերազանց աշխարհից...

Սուրէնի ծնկները դողդողացին, նրան թւաց՝ թէ քարը գնում է ոտքերի տակից, աճապարանքով թուաւ միւս ափը, ցած դրեց իր կախարդիչ բեռը:

Երկսով էլ նւաղած՝ փուեցին խոտերի վրայ.

Լուռ էին ու յոդնած անսահման երջանկութիւնից...

Արել ծածկւեց. հովերը կամացուկ իջան. անտառն իր մեծ ու փոքր ծառերով անշառուկ մաշտում էր թանձրացող խաւարի մէջ. ձորակը անքում էր գետակի ձայնից աւելի բարձր, աւելի ցաւագին. և նրանք տակաւին պարկած էին խոտերի մէջ:

— Սուրէն...

— Սօֆիա.

— Տուր ինձ ձեռքդ, խաւարը թանձրանում է, և ինձ թուում է, թէ ձեռքդ չը բռնեմ, նա քեզ կը տանի:

— Երեխայ, վախուկ երեխայ... Սօֆիան բռնեց նրա ձեռքը, քաշեց և ձգեց իր կրծքին իսկ միւս ձեռքը մեկնեց և մատները թաղեց նրա թանձր մազերի մէջ:

Կրկին լուցին.

— Սուրէն, ասա, ինչի՞ մասին ես մտածում.

Երիտասարդը լուռ էր և անթարթ նայում էր ընկերուհու աչքերին, կարծես առաջին անգամ էր տեսնում նրան:

— Զես պատասխանում, այ քեզ. և Սօֆիան պինդքաշեց նրա մազերը ծիծաղելով.

Ֆէա, ասա, ինչու դու այդպէս գեղանի ես և այդքան փխրուն... և յայտնւեցիր իմ կեանքի ճանապարհին, ինչպէս ճակատագիր. Սուրէնի ձայնի մէջ երազուն տիրութեան շեշտ կար. վերջին խօսքերը նա արտասանեց կարծես ինքն իր համար:

— Դժգոհն ես, այ կերթամ ջուրն ընկնեմ.

Ոչ իմ հրեշտակ, դու շատ ես սիրուն ջուրն ընկելու համար. ասա, ինչու ես դու այդքան սիրուն... ես քեզ պաշտում եմ. Սուրէնը բռնեց նրա գլուխը երկու ձեռքով, մոլեգնաբար համբուրեց նրա շրթունքները, ապա վերստին յետ ընկաւ խոտերի վրայ, ձեռքերը զլխի տակ դըեց, աչքերը յառեց դէպի վեր խորին մտածմունքի մէջ:

Կրկին լուցին. Սօֆիան նստած էր. նա հազիւ էր նկատում երիտասարդի պատկերը խաւարի միջից.

— Ոչ, ես ուզում եմ իմանալ ինչի՞ մասին ես մտածում դու Սուրէն, բացականչեց յանկարծ Սօֆիան, ես ուզում եմ իմանալ, լսում ես, այսուհետեւ ես միշտ

պիտի իմանամ քո բոլոր մտքերը, քո բոլոր
գաղտնիքները: Նրա ձայնի մէջ լալազին,
բայց վճռական շեշտ կար:

—Շատ ես ուզում իմանալ.

—Այս, շատ, շատ. Սօֆիան կռացաւ,
գրկեց նրա գլուխը, բարձրացրեց և նայում
էր աչքերին, ասա, ի՞նչ ես մտածում...

—Ես մտածում եմ այն կնոջ և այն եր-
կու աղջիկների մասին, որ տեսանք քիչ ա-
ռաջ. այնպէս չէ, այն աղջիկներն իրենց
խեղճութեան մէջ այնպէս գողարիկ էին,
այնպէս գրաւիչ, դա տանջանքի գեղեցկու-
թիւնն է, որ արորւած ծաղկի պէս լալիս
է անաղարտ հոգիների մէջ... յետոյ մտա-
ծում եմ քո մասին... և դու այնքան սի-
րուն ես, այնպէս քնքոյշ և կեանքն այնպէս
դաժան... Սօֆիա, Սօֆիա, իմ վախլուկ
եղնիկ, ինչպէս սիրում եմ քեզ...

Սօֆիան կամացուկ ցած թողեց նրա
գլուխը, յետ քաշւեց, ձեռքերով ծածկեց
դէմքը, կռացաւ և յանկարծ գետակի որո-
տի մէջ լսւեց նրա ուժգին հեծկտոցը.

—Սօֆիա... երիտասարդը թռաւ և
գրկեց նրա իրանը, Սօֆիա ի՞նչ ունիս.

Պատասխան չը կար, Սօֆիան լալիս էր
յորդ արցունքներով, նրա իրանը ցնցւում,

թրպրտում էր երիտասարդի բազուկնե-
րի մէջ:

—Սօֆիա, չէ ես քեզ սիրում եմ...
պաշտում եմ քեզ...

—Ես վախեննում եմ, ասաց Սօֆիան
արցունքի միջից կերկերող ձայնով, ես
քեզ հասկանում եմ... քո մտքերը սարսա-
փելի են... քո գաղտնիքները, քո ծրագր-
ները... ես չեմ ուզում, որ աշխարհը քեզ
խլի ինձանից, չեմ ուզում, դու պիտի իմը
լինիս ամբողջապէս և ես քո բազուկների
վրայ և կեանքը քո ոտների տակ՝ ինչպէս
քիչ առաջ այս գետակը.

—Սօֆիա, իմ Սօֆիա... Սուրէնը գըր-
կեց նրա գլուխը, համբոյրներով ծածկեց
թաց աչքերը, շրթունքները, այտերը, ապա
առաւ նրան իր բազուկների մէջ և ծունկի
եկած, որպէս պաշտամունքի մի գերագոյն
աստւածութեան առաջ, օրօրում էր նրան
փոքրիկ լացող երեխայի պէս և խօսում ա-
կանջին:

Եւ ալիքները որոտում էին...

—Ասա, երդւիր, որ դու միայն իմն
ես յաւիտեան, հեծեծում էր Սօֆիան.

—Ֆէա, ֆէա, լանում ես ալիքների ձայնը,
ասում էր Սուրէնը—ականջ դիր այս մէկին,
որ տնքում է այնպէս անյուսօրէն. չի՞ թը-

ւում քեզ իմ Ֆէա, որ դա հսկայ կարիքն
է հեկեկում։ Տես, իմ գողարիկ. նա երկաթ
բազուկներ, լայն կուրծք ու հզօր թիկունք
ունի. բաղսել է աշխատանքի բոլոր դռները,
չանգըել է մայր երկրի կուրծքը, ի զնւր...
եղունգներն արիւնոտւել են, աչքերը մթագ-
նել յոյսի հեռաւոր ճամբաները նայելով...
Եւ հսկայ տղամարդը հօնքուր-հօնքուր լա-
լիս է ցաւից ու զայրոյթից, մինչդեռ հե-
ռու, հեռու անակում մի խումբ երեխա-
ներ կան մերկ, սոված ու վախտ...

—Մի խօսիր, լուռ... համբուրիր ինձ,
մըմնջում էր Սօֆիան աչքերը կիսախուփ,
գլուխը յետ ձգած ու մարած նրա գրկում։

Երիտասարդը շըթունքների վրայ համ-
բուրեց նրա հոգին։

—Ֆէա, իմ չքնաղ, չէ՞ որ Փէաները
լեռներից յաճախ իջնում են, մոլորւած ճամ-
բորդի ուղին լուսաւորում ու դժբախտի
ցաւն ամռքում. չէ՞ նրանք նոյն իսկ լացող
եղնիկի արցունքն են սրբում, ու թօջնած
ծաղկի վրայ մորմքում... Զե՞ս լսում ալիք-
ների որոտի մէջ այս միւս ձայնը... պա-
ռաւ մայր է, երկու որդիները գնացին մի
օր, այլ ևս երբէք յետ չը գալու համար.
Նրանք կենդանի խորովեցին շողեկաթսայի
պայթիւնից։ Եւ պառաւ մայրը վշտից խե-

լագար սառը խրճթի մէջ օրօր է ասում հե-
ռաւոր մեռելներին...»

— Սուս, սուս, համբուրիր ինձ.

Երիտասարդը համբուրեց նրա հոգին
աչքերի մէջ։

— Ականջ դիր ձայների այս ժխորին
իմ երազների քնքոյց զաւակ, լսիր, հառա-
չանքներ են բոլորը՝ սև օձերի պէս իրար
դալարւած...»

...Երաշտ է, երկինքը պղնձւած, արտե-
րը՝ ցամաք, դաշտերը՝ խոպան. հարթու-
թիւնը տնքում է մօտալուտ քաղցի սոս-
կումից. մարդ, կին, մեծ ու փոքր, ծեր ու
երեխայ երկինք են նայում, աղաղակում,
լալիս, աղօթում մի կտոր չոր հացի հա-
մար... և կապարէ երկինքը նայում է, չե՞ս
լսում ձայները... ով կը տայ մի կաթիլ
յոյս նրանց հոգուն, որ հացի ճամբան գըտ-
նեն, որ քաղցից չը կոտորւին...»

— Մի շարունակիր, անողորմ, չեմ ու-
զում, համբուրիր ինձ, համբուրիր անվերջ,
խեղդիր, ոչնչացըրու ինձ.

Երիտասարդը բոց համբոյըներով խեղ-
դում է նրա մըմունջները.

— Ֆէա, քո համբոյըով իմ հոգին փըթ-
թում է, և հայեացքդ որպէս վեստալկայի
մշտավառ կրակ՝ սիրտս է բորբոքում... քո

սէրը որպէս ճաճանչաւոր վիարոս իմ ուղին
կը լուսաւորի... օ, եթէ գիտենաս, թէ դու
ինչ հզօր ես, եթէ կամենաս միայն.—

—համբուրիր, համբուրիր.
.

Խաւար էր. հոգեկան, խեղող խաւար.
երկնքում ոչ մի աստղ և թաւանտառը վա-
խից շնչում էր. ծառերը խօլ ձևերով գա-
լարում էին, ընկեր-ընկերի մօտ ձգւում,
կծկում, ու մեղմիւ տրտնջում խաւարից.
—Սուրէն, ես վախենում եմ...

—Զէ ես քեզ հետ եմ, մատաղ, երիտա-
սարդը գրկում է նրա իրանը, սղմում է ի-
րան պինդ, պինդ, և նրանք քայլում են
ծառերի միջով և խաւարը չորս կողմից
թանձրանում է հա թանձրանում.

Եւ հեռու ձորակի մէջ գետակն է մը-
ռնչում իր յաւիտենական երգը, որ ոչ ըս-
կիզը ունի և ոչ վախճան ինչպէս տառա-
պանքը...

...Եւ աշխարհը յաղթեց, ցաւոտ մար-
դակեր աշխարհ...

Նա խլեց Սուրէնին.

Կեանքի մեծ ծովի վրայ յաւիտենական
մըրիկը բաժանեց նրանց:

Սօֆիան յուսաբեկ ու անզօր՝ խոյս տը-
ւեց դէպի ափը, դէպի խաղաղ ափը, ուր

անյոյզ երջանկութիւնն էր ժպտում, իսկ նա,
տարերքի այն զաւակը, դէպի դու ալիքները,
դէպի մութ խորքերը նաւեց, ուր ծնունդ
են առնում բոլոր փոթորիկները, բոլոր ար-
հաւիրքները...

Եւ յետ չը նայեց... անիրանւը.

Սօֆիան նայում էր վշտահար ու գու-
նատ. կուգէր նետել յետեկից, համել, փա-
րել նրան, բայց ծովը շատ էր ալեկոծ, ալիք-
ները շատ էին ահարկու և ինքը շատ էր
թոյլ ու անզօր.

Սուրէնն անյայտացաւ.

Սօֆիան ուժգնօրէն սգաց՝ ու մնջեց.
Կին էր...և ամուսնացաւ:

* *

Այս էլ մի երազ էր, այս ամուսնու-
թիւնը:

Սըտի մխացող աւերակների վրայ Սօ-
ֆիան փորձեց բարձրացնել մի այլ տաճար,
որ երբէք չը պիտի կարողանար մոռացնել
առաջինը:

Ահա նա այնտեղ է, գրասենեակում իր
ամուսինը՝ փաստաբան Գարբիէլ Զանիկեանը,
հաստ, կարծ պարանոցով, խոշոր, ճաղատ
գլխով, հեզ, խելացի աչքերով մարդը:

Բարութիւն ու անդորրութիւն է կաթ-

կաթում նրա դէմքից, շարժումներից, մա-
նաւանդ նրա միշտ հարթ, թաւ, ու թեթե-
ւորէն խռպոտ ձայնից: Վերջին տարին
Զանիկեանի աչքերը կամաց կամաց փոխ-
ւում են, որոնք էլ աւելի հեղահամբոյր
են դարձնում նրա դէմքն ու հայեացքը:

Հաստատ համոզմունքների և նոյնքան
հաստատուն սովորութիւնների տէր մարդ է:
Դեռ բոլորովին մատաղ երիտասարդ, նա այդ-
պէս էր. սակաւախօս, լուրջ, աղմուկից խոր-
շող և ամբողջապէս անձնատուր իր պա-
րապմունքներին, միանգամայն անմասն դըպ-
րոցական կամ համալսարանական «խենթու-
թիւններին»: Մշտական և անփոփոխ սկըզ-
բունքն էր, ոչ ոքի վնաս չը տալ, իհարկին
բարիք անել, երբ դա առանձին, ծանր զո-
հաբերութիւնների հետ կապւած չէ, և ոչ
ոքի գործին չը խառնել: «Աշխարհում ա-
մենքի համար էլ տեղ կայ, պէտք է միայն
աշխատել» կրկնում էր նա յաճախ որպէս
գերազոյն իմաստութիւն և չէր ընդունում,
ամլութեան ու քաղցի դատապարտած աշ-
խատանք:

Կեանքի մէջ՝ նոյն մարդն է: «Լուրջ,
բարի, լաւ մարդ է», ասում են նրա մա-
սին իր շըջանում: Իր իրաւաբանական ըզ-

բաղմունքից դուրս ուրիշ ոչինչ չը գիտէ,
և հմուտ է իր մասնագիտութեան մէջ, բարե-
խիղճ աշխատաւոր յանձն առած գործի մէջ: Առաւոտեան զարթնում է միշտ որոշ
ժամին, գրասենեակում փակւում, աշխա-
տում է մինչև որոշ ժամ, ապա գնում է
դատարան միշտ կառքով և ամեն օր ճիշտ
երեքին տուն դառնալով, թղթապանակը թեկի
տակ, յոգնած ու քրտնաթոր, նա սանդուղք-
ների վրայից կանչում է.

— Մօֆիկ, ճաշը պատրաստ է.

Եւ ճաշը միշտ պատրաստ է:

Սեղանի վրայ խօսում է դատաւորնե-
րից, դատից, արդարացածներից ու դատա-
պարտւածներից իր խաղաղ ու հարթ ձայ-
նով, ինչպէս կը պատմէր փողոցում դիպ-
ւածով տեսած սագերի մասին: Կինը լսում
է լուրթեամբ, վաղուց հետէ ձանձրացած
այդ բոլորից:

Մի անգամ միայն ամուսինը խիստ ոգե-
ւորւած էր. նա ընտրւած էր միջնորդ դա-
տարանի նախագահ՝ իբրև չէզոք, անկողմ-
նակալ մարդ, այդ նրա խոշոր հասարակա-
կան ծառայութիւնն էր:

— Այսպէս է իմ ընկեր, ասում էր նա
կնոջը հպարտութեամբ. արդարութիւնն ու
իմաստութիւնը միշտ սառն, անաշառ չէզո-

քութեան մէջ է, որ իր հաւասարակշռութիւնը չի կորցնում անդամ կեանքի ամենափոթորկոտ շրջաններում։ Հասկանալի է թէ ինչու միշտ նրան են դիմում հրապարակների վրայ ճշացողները, երբ իրաւունք են փնտրում։

Զեզոքի իմաստութեան մասին կինը լըսել է անթիւ անդամ՝ ութ տարուց ի վեր. իրենց տան մթնոլորդն անդամ ծծւած է այդ իմաստութեամբ. և դարձեալ լըսում է լոռութեամբ ու սպանիչ ձանձրոյթով։

Այդ անյոյզ ու անդորր հոգու տէր մարդը սակայն մի հատիկ հզօր, անդիմադրելի կիրք ունէր—իր բուռն սէրը դէպի կինը, որի գեղեցկութեան հրապոյրների լուռ գերին էր։ Սակաւ էր արտայայտում խօսքերով, բայց նրան միշտ թարմ, կայտառ, կենսուրախ տեսնելու համար Զանիկեանը պատրաստ էր ամեն զոհողութիւն յանձն առնել։

Եւ առաջին տարիները Սօֆիայի խենթքմահաճոյքներն անվերջ էին. Երեխայի պէս նա աջ ու ձախ փեատում էր կեանքի ծաղիկները, և միշտ մնում էր յուսախաբ, ու նետում դէպի այլ հաճոյք, այլ վայելք։ Մերթ պերճ, մեծագին զգեսաներ, մերթ ճամբորդութիւն դէպի անծանօթ վայրեր, բու-

ժարաններ, ինճոյքներ, ներկայացումներ, երբեմն էլ արտառոց, խելացնոր պահանջներ։ Սօֆիան անգիտակցաբար փորձում էր իր յարաճուն ու բազմազան քմահաճոյքներով լըցնել մի դատարկութիւն, որ սակայն անյատակ էր... հոգու ծարաւը չէր յագենում, և նա աւելի ու աւելի յաճախ անձնատուր էր լինում յուսաբեկ թախծութեան։

Վերջին տարիները նա կամաց քաշում էր աշխարհից և ամփոփում ինքն իր մէջ։ Ամուսինն է ստիպւած, զանազան հընարներով նրան գուրս քաշել այդ անհասկանալի անձկութեան ճիրաններից, ի զուր... Սօֆիայի հոգում մեղմիւ զարթնում էր փըշրւած կեանքի կսկիծը, որպէս քնած սարդը և հանդարտ հիւսում էր իր ոստայնը։ Հնչուն ծիծաղի տեղ բռնում էր մելանխոլիկ ժապիտը և բերանաբաց յօրանջող ձանձրոյթը. ամեն ինչ այժմ նրա համար տաղակալի էր և՛ շրջապատը, և՛ իր բնակարանը, և իր զգեստները, իր ամբողջ կեանքը, և մանաւանդ՝ այդ ամուսինը իր կարճ պարանոցով, վաղաժամ հերազուրկ գլխով, լիքը մարմնով, աչքերի տակի անհաճոյ պատկերով։ Զայրոյթի աստիճան անտանելի էր Սօֆիային նոյն իսկ ամուսնու բարութիւնը, և կ'ուղէր, որ նա չար, այլանդակ հրէշ

լինի. բայց նա բարի էր, կամակատար, և
ամեն օր որոշ ժամին յայտնւում էր սահ-
դուղքների վրայ իր անբաժան գրապանա-
կով և հեին բացականչում.

— Սօֆիկ, ճաշը պատրաստ է.

— Պատրաստ է, պատրաստ է, պատաս-
խանում էր կինը մի եղանակով, որի մէջ
հնչուում էր արդէն անհրապայր, գունատ
կեանքի բոլոր տաղտուկը:

Մի ցրտութիւն, որի աղբիւրը անյայտ
էր ամուսնուն, օրաւուր սաստկանում, տա-
րածում, բռնում էր նրանց ամբողջ բնա-
կարանը,

Նրանց հոգիները լուռ սրսփում էին
սեփական յարկի տակ.

* * *

Վրայ հասան անակնկալ օրեր.

Դրսում կեանքը փոթորկւում էր ալե-
ծուփ ծովի պէս:

Նոր գաղափարներ ակօսում էին ծըթ-
ուած հասկացողութիւնների մոայլը և նրանց
յանկարծական փայլի տակ բացւում էին
սարսեցուցիչ պատկերներ:

Լրագրերի մէջ վերջին ժամանակ յա-
ձախ էր լսւում Սուրէնի անունը. ուր էր
նա մինչեւ այժմ, որտեղից էր յայտնւել,
Սօֆիան այդ չը գիտէր. և ինքն իրեն հա-

ւատացնում էր, որ չի էլ ուզում իմանալ,
որ միանգամայն անտարբեր է դէպի նա,
որ հին սէրը անդարձ թաղւել է մոխիր-
ների տակ այլ ևս երբէք չը բորբոքւելու
համար. Եւ սակայն՝ ամեն առաւօտ լրագի-
րը բանալիս, նա նախ Սուրէնի անունն էր
փնտրում, ագահութեամբ կարդում էր այն
բոլորը, ինչ նրան էր վերաբերում, կարդում
էր, զայրանում ինքն իր վրայ այդ հետա-
քրքրութեան համար, գէն էր շպրտում թեր-
թը, և գլուխը յետ ձգած ձեռների վրայ,
մնում էր երկար ժամանակ մտախոռն Եւ
չարիքի պէս այդ անիրաւերիտասարդը ա-
մեն տեղ էր, նրա հզօր, անդիմադրելի խօս-
քը հնչուում էր ամեն օր, նրա ձայնից ամ-
բոխը եռում էր ու ծփծփում...

Սօֆիան ուխտում էր այլ ևս երբէք չը
կարդալ նրա մասին. յաջորդ լրագիրը ձեռք
առնելիս աշխատում էր խոյս տալ այն տո-
ղերից, ուր նրա անունն էր, ի զուր... վեր-
ջը կարդում էր, ու սոսկումով նկատում,
որ միայն նա էր հետաքրքրում իրեն:

Եւ այստեղ, նրանց յարկի տակ այս
հաստ մարդը իր թղթապանակով, որ կար-
ծես նրա մարմի մի մասն էր, իր կարձ
վզով, ճաղատ գլխով, և ամենօրեայ կանչը.
— Սօֆիկ, ճաշը պատրաստ է... Միշտ

անյոյզ, միշտ խաղաղ, ասես դրսում ոչինչ
չէր կատարւում:

Ահ, ինչպէս կ'ուզէր Սօֆիան չը լսել
այդ ձայնը:

Երբ մօտենում էր ճաշի ժամը, նա ան-
հանգստութեամբ նայում էր պատի ժամա-
ցոյցի սլաքին. զայրոյթով նկատում էր,
թէ ինչպէս մետաղի այդ փոքրիկ սուր կը-
տորը խաղում, շարժում է դէպի ճակա-
տագրական ժամը, յամառ ու հաստատ, որ-
պէս օրհաս:

Այդ անիծւած սլաքի շարժման մէջ
նա տեսնում էր զիտակցական անողորմ ձըգ-
տում տանջել, չարչարել նրան, թւում էր,
թէ հէնց այդ սլաքը տեղ հասնելուն պէս
պիտի ճչայ՝

—Սօֆիկ, ճաշը պատրաստ է!

Նա պատրաստ էր փշել այդ ժամա-
ցոյցը, կամ բռնել սլաքը որ նա առաջ չը-
շարժւի, չը հասնի խեղդող, հոգեհան ժա-
մին, որպէսզի չը լսէի այն սպանիչ ձայնը.

Նա ատում էր այդ ձայնը, ատում էր
ժամի երեքը, սանդուղքները, մանաւանդ
այն թղթապանակը, որ պարունակում էր
այնքան տաղտուկ թղթեր, գրոտած ու հա-
մարներով, որպէս իր ամուսնու չափած,
ձևած հոգին էր:

Ատում էր... և հոգու խորքում մոխիբ-
ների տակից, իրենից ծածուկ, բարձրանում
էր «միւսի» պատկերը, այնպէս, ինչպէս
տեսել էր նրան տարիներ առաջ, այն ահա-
ւոր պատկերը, հմայիչ ու սարսափելի գի-
շեր, մոայլ ու խորհրդաւոր անտառ, ան-
դունդում եռացող կատաղի ջրվէժ, բար-
ձունքները խոյացող արծիւ...

—Արծիւ, արծիւ, շշնջում էր նա, և
իր ձայնից վախեցած, լուլմ:

Եւ այն արծիւը սաւառնում էր ամբոխ-
ների վրայով, ով կը հասնի նրան. և նրա
ոտների տակ հազարներ, ինչպէս անտառի
գետակը այնքան տարիներ առաջ... ինչու
այժմ ինքը նրա բազուկների վրայ չէ...

—Սօֆիկ, ճաշը պատրաստ է...

—Ա՛հ...

—Կինը ցնցւեց, դէմքը կնճռեց և ար-
համարհանքի ու ցասումի ժպիտը ծռմռեց
նրա շրթունքները:

Ճան այն օրն անցաւ կատարեալ լը-
ռութեամբ. ամուսինը աչքի տակով նայեց
մի քանի անգամ, բայց հասկանալ չը կա-
րողացաւ.

—Սօֆիկ, գոյնդ լաւ չի, հիւանդ չես.

Կինը նայեց նրան թախծոտ հայեացքով,
ու դարձեալ լուռ մնաց:

Ամուսինը գլուխն օրօրեց, վեր կացաւ:
Հասկանալ չէր կարողանում. չէ ինքը
միշտ այնպէս բարի, այնպէս հաճոյակատար
ամուսին է եղել: Մի վայրկեան կանգ առաւ,
մտախոհ նայեց ոտքերի առաջ, ապա հան-
դարտ շարժւեց դէպի ննջարանը ճաշից յե-
տոյ՝ ըստ սովորութեան, մի փոքր հանգըս-
տանալու համար:

—Գաբրիէլ:

Ամուսինը յետ նայեց արդէն ննջարա-
նի դրան մօտ:

—Ես ուզում եմ գնալ արտասահման,
ասաց Սօֆիան հաստատ ու վճռական.

—Արտասահման... Զանիկեանը ականջ-
ներին չէր հաւատում.

—Այս, արտասահման.

—Այժմ, երբ ձմեռը մօտենում է.

—Այս, այժմ, անմիջապէս:

—Բայց... բայց, սպասիր հոգիս... դու
գիտես, որ քեզ համար ես ոչինչ չեմ խը-
նայի. ինչու սակայն այժմ գնալ, մենակ,
ձմբանը. դարնանը միասին կերթանք: Ու
նա մօտեցաւ կնոջը.

—Ո՞չ, ես այժմ եմ ուզում, ես հիւանդ
եմ. նւազում եմ. այստեղ ամեն ինչ ինձ
ձանձրացնում է, ես... ես... նա չը կարողացաւ
շարունակել և բարձրածայն հեկեկաց ու գը-

լուխը թաղեց ձեռքերի մէջ:

—Սօֆիկ, ինչ է պատահել, ամուսինը
շփոթւած մօտեցաւ, քնքութեամբ գրկեց
նրա գլուխը և համբուրեց... ինչու համար
այսլացը, իմ ընկեր, երեխայ չես... շատ լաւ,
գնա, երբ ուզում ես, գնա մատադ, ուր ու-
զում ես... այ, բոլոր գործերս կը ձգեմ և քեզ
հետ կը գամ...

—Ո՞չ, ոչ, գործերդ մի թող, ափսոս են...
մենակ եմ ուզում գնալ, մենակ...

—Թո՞ղ այդպէս լինի իմ աղաւնեակ, գը-
նա մենակ. գնա լաւ կազդուրելիր որևէ կու-
րօրտում... իսկ երեխան...

—Երեխան... Սօֆիան իսպառ մոռացել
էր, երեխան...

—Լաւ, այդ մասին յետոյ կը մտածենք,
առայժմ հանգստացիր, ես կը հոգամ մնա-
ցածը, կուզես տար երեխան, կուզես ես կը
պահեմ... ամուսինը կը կին համբուրեց նրան
ու հանդարտ ու մտածկոտ հեռացաւ ննջա-
րան:

Սօֆիան մնաց իր տեղում և հիացած էր
իր յանկարծական երջանիկ մտքից. զնալ,
փախչել, երկսից էլ միաժամանակ փախչել,
քանի չի հանդիպել նրան. այլապէս նա ըզ-
գում էր որ մօտենում է զարհուրելի աղէտը:
Փախչել ժամ առաջ. նրան թւում էր միակ

ելքը, միակ փրկութիւնը. այս միտքը նրան
իսպառ հանգստացրեց:

Զէր սպասում թէ կը հանդիպի նրան
մինչև մեկնելը.

Դիպւածը սակայն այլ կերպ էր տնօրի-
նել. տեսաւ և ինչ պարագաներում...

Այժմ այլես ոչ մի նպատակ, ոչ մի ծը-
րագիր չունէր. կեանքից կտրւած տարւում
էր մի անծանօթ աշխարհում, անխորհուրդ
ու անմիտ: Մի հատիկ պատկեր էր մնացել
զիսում, այդ Սուրբնի դէմքն էր, նրա դի-
ւական աչքերը, այնպէս, ինչպէս նրան
տեսաւ երէկ հրապարակում, սւինների մէջ:
Աչքերը փակ երազում էր, և միշտ նոյն
պատկերը... Եւ նրան տարան զինւորները:

Ինքնախաբէութեան այլ ևս տեղ չը
կար: Սօֆիան զգում էր, որ սիրում է Սու-
րբնին, սիրել է միայն նրան և բաժանել
նրանից, փախչել, հեռանալ չի կարող. ուր
էլ գնայ, այդ սէրը նրա անբաժան ուղե-
կիցն է:

«Վայրկեաններ կան, որոնք յաւիտե-
նականութիւն արժեն»: Տարիներ յետոյ
այս խօսքերը հնչւում էին նրա ականջին
որոշ, մէկին, ինչպէս ճակատագրի վճիռ,

ինչպէս դագաղի վրա ընկնող քարերի ձայնը:
«Յաւիտեանն ապրել մի վայրկենում».

Սօֆիան միայն այժմ էր ըմբռնում այս խօս-
քերի ամբողջ արժէքը. այժմ՝ երբ նա ար-
դէն ճաշակել էր անյոյզ, տափակ, անխոր-
հուրդ կեանքի բոլոր դառնութիւնը: Զգում
էր որ սիրել էր Սուրբնի մէջ հէնց այն ան-
հանգիստ, այն հոյակապ դեր, որի դէմ
կուռում էր իր սիրով, իր կանացի հրապոյր-
ներով և որից յաղթւեց: Մի միամիտ ու
չքնաղ հակասութեամբ, որով այնպէս հա-
րուստ է սիրող կնոջ հոգին, այն ժամանակ
նա ուզում էր, որ իր պաշտած տղամարդը
լինի այնպէս, ինչպէս որ կայ, տարերային
հոգով, խօլ շշմեցնող խոյանքներով, որ նա
լինի ամբոխի կուռքը, բայց և պատկանի
միմիայն իրան. խաղաղ, երջանիկ, վտան-
գից-աղատ ապրի սեփական յարկի տակ,
իր գրկի մէջ:

Խեղճ սէր... հակասութիւններից հիւս-
ւած խեղճուկ երազներ...

Այդպէս էր մտածում այն ժամանակ,
տաս տարի առաջ: Եւ այժմ իր ապրած կեան-
քի գունատ, անհրապոյր խեղճութեան մէջ,
նա կարօտ է բուռն յոյզերի, որ ալեկոծէին
նրա սիրտը, կարօտ է սոսկումի, հսկայ տան-
ջանքի խելայեղ հրապոյրներին, որ նա կու-

զէր մի համբոյրով ծծել տառապանքի շըրթունքներից ու «յաւիտեանն ապրել մի վայրկենում»:

Վերստին յիշեց վտակի ափին ապրած չքնաղ ժամերը, կոհակների շառաչը, Սուրէնի ձայնի խորհրդաւոր ելևէջները, այն արբեցնող շշուկը, երբ նա խօսում էր աշխարհի ցաւից և իր կրակ համբոյրներով աշխատում էր իր հոգին հալւած մետաղի պէս ձուլել սիրած կնոջ հոգու հետ:

«Ֆէա, Ֆէա, դու ինչո՞ւ չը հասկացար նրան...»

Դուրս եկաւ պատշգամբ. Ժօրժիկը խաղում էր պարտիզում.

—Մամա, մամա... Երեխան մեկնեց իր թաթը դէպի մայրը.

Բաց օդում, արեի առաջնա աւելի վըտիտ ու գունատ էր երեսում. ի՞նչ կը ծնւէր «նրանից», միւսից, մտածեց Սօֆիան տըխրութեամբ.

—Մամա, մամա, տես...

Երեխան մի փոքրիկ, հիւանդ թիթեռունէր ձեռքին, որ բռնել էր ծաղկի վրայից, ուր կենդանին փորձում էր յետին ճիգով ջերմացնել իր յոգնած նւազած կեանքը:

Այդ երեխան...միշտ հիւանդ, միշտ դալուկ, ու այդպէս էլ ծնւած էր, իր տարակուսանքների, հոգեկան գաղտնի տագնապների, լուռ ցաւերի այդ խղճուկ պտուղը, ասես մայրական արգանդում ապրել էր ծընողի բոլոր տանջանքը: Մանուկը տառապում էր քթի յաճախակի արիւնհոսութեամբ, որ երբ սկսւում էր խիստ դժւարութեամբ էր դաղարում: Եւ ամեն անգամ արեան կրստից յետոյ՝ խեղճ Ժօրժիկը անկողին էր ընկնում:

Մայրը տիւրութեամբ մտածում էր յաճախ՝ թէ գուցէ ինքն է պատճառ այդ անմեղ արարածի դժբախտութեան, որ իր ցաւատանջ հոգին է դրել մանուկի մէջ, խամրել նրա մատաղ կեանքը և գուցէ վաղժամ գերեզման պատրաստել իր զաւակին: Եւ մի անողորմ զուգաղիպութեամբ՝ այդ մանուկը որ պիտի հաշտեցնէր նրան իր կացութեան հետ, պիտի կապ դառնար մօր և այն սենեակում աշխատող մարդու մէջ, դարձել էր ընդհակառակը մարմնացած կսկըծալի ապաշտաւնք, և շրջում էր նրա աշքերի առաջ որպէս մի մխացող, թանձրացած ցաւ, իր կեանքն էր, կենդանի վկան մի մեծ, մի անդառնալի սխալի:

Ներս եկաւ. դադար չունէր. թափա-

ոռում էր սենեակից սենեակ և ամեն տեղ
հետը մանածում սիրտը գալարող տանջան-
քը: Մասւ սեղանատուն, անցաւ ննջա-
րան, ապա վերստին յայտնւեց ընդունա-
րանում և հայեացքը յառեց խորքի գրանը:
Ամուսինը դեռ այնտեղ էր: «Ի՞նչ է մնա-
ցել, Տէր Աստւած, գոնէ շուտ գնա դա-
տարան, կամ փակւած մնայ այնտեղ,
դուրս չը գայ գոնէ այսօր, ոչ, յաւիտեան
դուրս չը գայ»: Սօֆիան զգում էր, որ էլ
ոյժ չունի լսելու այն սպանիչ բացական-
չութիւնը.

— Սօֆիկ, ճաշը պատրաստ է...

Այս, գոնէ այսօր չը լսէր այդ ձայնը,
որ ութն տարուց ի վեր սղոցի պէս կարա-
տել, արիւնոտել է նրա սիրտը, որի ամեն
մի խօսքը մուրճի պէս է ընկել իր գլխին.
գոնէ այսօր, այսօր ազատւէր այդ թունա-
լից բաժակից, որ ութ տարի շարունակ խը-
մել է լոռութեամբ, մտածում էր նա: Թու-
լացած նստեց, արմունկներով յենւեց սե-
ղանին և գլուխը ձեռքերի մէջ տռաւ:

Դուռը բացւեց.

Սօֆիան ցնցւեց ու դողաց:

Ամուսինը ժպտագէմ, ինքնազոհ ու եր-
ջանիկ դուրս թռաւ իր սենեակից ձեռքին
մի թուղթ բռնած.

— Սօֆիկ, Սօֆիկ, դարձեալ ընտրւած
եմ նախագահ պատոյ ատեանի, որ պիտի
դատի ի՞նչ ես կարծում, ում... Սուրէն
Դ...ին և Ն... թերթի խմբագրին:

Այդ միջնադէպը, որ հասել էր միջ-
նորդ դատարանի, ծանօթ էր Սօֆիային.
քանի շաբաթ առաջ մի հրապարակական
ժողովում արդար ցասումի վայրկենին
Սուրէնը Ն... թերթի խմբագրին անւանել
էր «ստորագրու վարձկան»:

Սօֆիան լուռ էր, արձանի պէս քա-
րացած և մտածում էր: «Այս ողորմելի եսա-
սէրը չը գիտէ նոյն իսկ որ նա բանտարկ-
ւած է, երբ ողջ քաղաքը գիտէ.

— Նայիր, ամուսինը մեկնեց ձեռքի
թուղթը, տես ովքեր են դատաւորները:

— Ցնծութիւնդ վաղաժամ է, յետ մը-
ղելով թուղթը՝ պատասխանեց կինը առհար-
կի խաղաղութեամբ. դու այս անգամ տա-
րաբախտաբար քո հասարակական խոշոր
գործունէութեան ապացոյցը տալու հաճոյքը
չը պիտի ունենաս: Եւ նա սեղանից տռաւ
ու մեկնեց ամուսնուն օրւայ լրագիրը: Ա-
մուսինը կոտրւած ու շփոթւած՝ լոռութեամբ
տռաւ թերթը, կարդաց կնոջ ցոյց տւած
տեղը.

«Երեկ խուզաբկեցին ու կալանաւորե-

ցին երիտասարդ իրաւաբան Սուրէն Դ...ին.
պահակների խիստ հսկողութեան ներքոյ՝
նրան կետրոնական բանտ տարան»։ Վեր-
ջացրեց ու հեգնօրէն ժպտաց շրթունքները
ծոմուելով։

—Յիմար, աւելացրեց ձանիկեանը լը-
րագիրը շպրտելով սեղանի վրայ։

Սօֆիան՝ անորոշ հայեացքը հեռու, մատ-
ներով ջղաձգաբար խաղում էր սեղանի սրի-
ոոցի հետ։

—Կարելի՞ է հարցնել, թէ ինչու «յի-
մար», հարցրեց նա աշխատելով իրան զըս-
պել, բայց զգաց, որ շրթունքները դողդո-
ղում են։

—Միայն յիմարը՝ ունենալով նրա տա-
ղանդը, նրա խօսքի ոյժը, իր խսկական պա-
րապմունքը, իր կոչումը կը թողնէ բանտ
կերթայ իշխ նահատակութեան համար։ Զա-
նիկեանի տօնը ծանրախոհ էր, և նա մի քա-
նի քայլ յետ ու առաջ արեց, ասես հաս-
տատելու համար իր խօսքերի ճշմարտու-
թիւնը։

Սօֆիան վճռեց լոել և վերջ տալ այս
խօսակցութեանը, որ ընդունում էր սպառ-
նալի կերպարանք. բայց հոգին շրթունքնե-
րի վրայ էր, վիրաւոր, բողոքող հոգին. նը-
րան էլ զսպել չէր կարող։

—Եթէ տաղանդ ու խօսքի ոյժ ունի,
ինչպէս է յիմար։

—Յիմար էլի... այլապէս ինչու է բանտ
գնում։

—Անկասկած, փոխանակ պարարտա-
նալու և ամեն օր ժամի երեքին սանդուղք-
ներից ճշալու՝ «ճաշը պատրաստ է»...

Հարւածը շեշտակի էր, դիպաւ նպա-
տակին։

Ամուսինը կանդ առաւ, լոռութեամբ յետ
յետ քաշւեց, ձեռքերը ծալեց կրծքին, նա-
յեց կնոջը չուծ աչքերով, որոնց մէջ զայ-
րոյթից աւելի վախ կար և նրանց հայեացք-
ներն իրար հանդիպեցին. նոյնքան թոյն,
նոյնքան ատելութիւն կար կնոջ աչքերի
մէջ, որքան քիչ առաջ արտասանած նա-
խաղասութեան մէջ։ Զանիկեանը պարա-
նոցը մեղմիւ ձգեց առաջ, նա հեռում էր
ու նայում յոնքերի տակից, ասես առաջը
խորխորատ էր բացւում, ապա գլուխը յետ
ձգեց և լայն շունչ առաւ։

Սօֆիան լուռ էր.

—Սօֆիկ.. Սօֆիա, բացականչեց նա
կերկերուղ, խեղդուկ ձայնով ու շրթունք-
ները կծոտելով. Սօֆիա, կշուցիր ասածդդ.
Ու կուզէր, որ կինն ասէր, թէ յան-

կարծական, անմիտ բռնկման արդինք էր

այդ չար նախադասութիւնը, կամ երեսը ծածկէր, լոէր, իսպառ լոէր, ինքն էլ մոռացութեան կը տար, այն կը համբուրէր կը-նոջը ու մոռացութեան կը տար:

Ո՞չ, Սօֆիայի հայեացքի մէջ մեղմութիւն չը կար. նոյն թոյնը, նոյն ատելութիւնը, նոյն պայքարող վճռական կեցւածքը:

— Սօֆիա, Սօֆիա... և նրա ձայնի մէջ այժմ հնչում էր աղերսանք, պաղատանք, նա կարծես լալագին հայցում էր կնոջը մեղմել այդ զարհուրելի հայեացքը, արցունքի, անուշ յուզմունքի մի շիթ քամել այդ չքնաղ կոպերից, որոնք այսօր չէին թարթում, այլ շանթում էին նետերի պէս: Կինը լուռ էր...

— Բայց, այդ անկարելի՛ է...սպասիր... սպասիր, ես շշմում եմ, այդ դու չասիր— Նա տարածեց ձեռները դէպի կինը— այդ դու չասիր, քո շրթունքները չարտասանեցին այդ խօսքերը... Սօֆիա...

— Ո՞չ, ոչ, ես ասացի, ես...

— Սպասիր, մի շարունակիր անողորմ, դու չը կշռեցիր ասածդ... այնպէս չէ, չը կշռեցիր, Սօֆիա, Սօֆիկ...

Կինը ոտքի կանգնեց.

— Կշռեցի, այն, վաղուց եմ կշռել... ես տարել եմ, ես համբերել եմ տարիներ, որ

մեր կեանքը դառնայ լոկ ճաշ ու անամնա- կան վայելք, որ մեր տան պատերի վրայ փշրւին բոլոր ազնիւ ճիշերը, որ ոչինչ, ոչինչ չաղմկի այս յարկի եսասիրական տաքուկ մթնոլորտը: Եւ ի՞նչ եմ եղել ես քեզ համար, խաղալիք, մի զարդարւած տիկնիկ, որ ուրիշ հոգս չը պիտի ունենայ, բացի քեզ գրաւելու, քեզ վայելք պատճառելու հոգսից... և քո երազած երջանկութիւնը ութ տարի շա- րունակ ես քեզ տւի լիուլի... ի՞նչ ստացայ ինքս. գու ինձ երբէք չը տւիր քեզ վտանգի մէջ զգալու դաժան, բայց ազնիւ, հզօր հա- ճոյքը. երբէք քո կեանքի մեղկութիւնը մի վսեմ խենթութիւն չաղմկեց. իմ գեղեցկու- թիւնն ու թարմութիւնը՝ որպէս իսկական եսամէր, գու քաշ տւիր ու տրորեցիր անաս- նական անիմաստ կեանքի փոշիների մէջ և քո տափակ հոգու դատարկութիւնից փչող ձանձրոյթի հովը, իմ լաւագոյն օրերը խամ- րեց, թող այդպէս լինի, բայց գոնէ առաքի- նութիւն ունեցիր. խոնարհւելու անձնագոհ հերոսների հպարտ, ազնիւ խոյանքների առաջ և... ճաշիր. ճաշիր.. ուհ...

Նա հեկեկաց, կուրծքը բռնեց ու ընկաւ դիւանի վրայ:

Ամուսինը քարացաւ. ծնկները ծալւում էին, չընկնելու համար բռնեց բազկաթոռի

թիկունքը։ Իր կինն էր խօսողը, Սօֆիկը, իր գեղանի Սօֆիկը...հաւատալ չէր կարողանում աչքերին, ականջներին...բազկաթոռը դողում էր ձեռքի մէջ, բերանի ձախ անկիւնը խաղում, ծռմռում էր...նա բաց աշքով տեսնում էր ինչպէս փլչում, խորտակւում է իր տունը, իր կեանքը, իր ամբողջ կեանքը... խօսք չունէր, պատասխան չունէր... գլխում անասելի ժխոր էր, անկապ մտքերը արտառոց պատկերների հետ իրար խառնւած, գառնում էին ինչպէս մրբկի շնչով։ և կըծքի տակ մի բան թանձրանում, բարձրանում էր, ուռչում, եռում և... պայթեց։

— Սօֆիկ, Սօֆիկ... այդ ի՞նչ արիր... ու ընկաւ բազկաթոռի մէջ։ Սովորական աղաղակ չէր, այլ սրտապատառ, ահագին ճիչ մի անդառնալի աւերածի առաջ։ մի բան փլաւ, մի բան փշրւեց նրանց հոգիների մէջ...

Տիրեց լոռութիւն, աւերածից յետոյ իջնող ծանր, մեռելային լոռութիւնը։ լուռում էր միայն Սօֆիայի մեղմ հեծկլտոցը, լուսամուտի ապակու վրայ յամառաբար ծեծւում, բզզում էր աշնան մի ճանճ։ սեղանատանը ժամացոյցը խփեց տասներկու, լալագին, դողդոջ հարւածներով։ Զանիկեանը ոտքի ելաւ նա հեռում էր թափով և կուրծքը պայթեցնելու չափ։ աչքերի մէջ այժմ կատաղի ցանելու չափ։

սում կար, յօնքերը կախւել էին մինչև թերթերունքները, ճակատին խորունկ կնճիռներ, շրթունքները պինդ իրար սղմած և ձեռքերը դարձեալ ծալած կըծքին։ Նա մօտեցաւ կնոջը դանդաղութեամբ, կանդ առաւ առաջը, երկար նայեց, ապա ձեռքը դրեց նրա ուսին։

— Լսիր, դու պէտք է ինձ լսես...դու իրաւոնք չունիս ինձ չը լսելու...ձայնը վլճռական էր և տոնը խիստ—լսիր, ասածներդ հասկացայ։ և «Ճանձրոյթի հողմ», և «ազնիւ խոյանքներ» և «Վսեմ խենթութիւն»... և «տափակ հոգի»...այդ բոլորը լսւ, բայց դրանցից դուքս մի ուրիշ՝ աւելի նշանակալից բանն, երեկի մոռացար ասել, և պէտք է ասես, այդ ես պահանջում եմ, որպէս քո ամուսին։ ասա, դու սիրմում ես նրանի...»

Սօֆիան գլուխը բարձրացրեց, թաց արտասունքների միջից նայեց նրան շեշտակի։

Այն...

— Աա...ամուսինը կրկին յետ յետ քաշւեց լոռութեամբ, աջ ձեռքով ճակատը բռնեց աչքերը յատակին յառած՝ ապա դանդաղորեն դիմեց գէպի իր գրասենեակը . . .

.
— Մամա...մամա...այդ նւազ ձայնը, խղճուկ՝ որպէս մորթւող գառան հառաչ, որ

յանկարծ լուեց նախասենեակից։ Սօֆիան
դիւանու վրայ և ամուսինը գրասենեակի
գուան առաջ քարացան, իրար նայեցին սոս-
կումով. այդպէս էր կանչել ժօրժիկը քանի
մի ամիս առաջ զարհուրելի արնեհոսութեան
ժամին. այդ ճիշն էր, որ հնչւեց վերստին
ասես գերեզմանից, որպէս մահւան մըր-
մունջ...

Միթէ նորից...

Դուռը բացւեց, աղախինը ներս ընկաւ
հեալով, գունատ ու վախեցած և երեխան
գրկին արնաքամ, ուշակորոյս—մամա մա-
մա...

Մայրը ճշաց ու նետւեց դէպի մանու-
կը, խլեց աղախինի գրկից, սղմեց կրծքին ու
խելագարի պէս վազգում էր սենեակում.

— Բժիշկ, բժիշկ շուտով, հեծեծում էր
նա.

Ամուսինը նետւեց դէպի հեռախօսը.

Հնչւեց զանգը տենդոտ, արագ արագ...
բժիշկը տանը չի...միւսին՝ նորից զանգ...
հիւանդ պառկած է...երրորդ բժիշկը, հաս-
ցէն չը կայ...ինչ եղաւ հասցէների գիրքը. .
այստեղ էր...ահա, գտաւ, թերթում է դոլ-
դոջուն մատներով...մեր է նրա անունը,
համարը...գտաւ, վերստին զանգ, տանն է,
կը դայ՝ իսկոյն... կը դայ, կը դայ...

Եւ ուշացաւ...

Ժօրժիկը՝ աչքերը փակ, կտաւի պէս
սպիտակ դէմքով, նւաղած ընկած էր մօր
բազուկների վրայ, մեռած թիթեռնիկը պինդ
սղմած թաթիկի մէջ, և արիւնը հոսում էր,
հոսում էր քթից. Բարակ, վարդագոյն թելով
ծորում էր մանուկ կեանքը և անդառնալի
կերպով տանում էր իր հետ մի ուրիշ բան,
որ ծնողներին պահում էր նոյն յարկի տակ...

Ժօրժիկը մեղմիւմարեց, ինչպէս ճրագ:

Զանիկեան ամուսիններն այժմ երկու
այրիներ էին դէմ առ դէմ կանգնած օտար,
խորթ, ասես երբէք իրար տեսած չը լինէին.
կանգնած էին իրենց ոտների առաջ բացւած
խորխորատի երկու ափերին, ուր կու դը-
նաց մանուկ կեանքը...

Մի շաբաթ յետոյ՝ նրանց տան դռան
վրայ կարդում էին յաճախորդները. «Երդ.
հաւատարմատար Գ. Զանիկեանը հիւան-
դութեան պատճառով պարապմունքները դա-
դարեցրել է»։ կարդում էին ու յետ գնում,
իսկ ներսում նա մենակ ծխում էր ու շըր-
ջում դատարկ սենեակներում.

Սօֆիան չկար...



ակ ուստի մեր զգաց պահօք
որ ոչ խնդ հայութ յացէ յ յառաւ
ուստի ուժաւով ոչ հաջող ըստ ուստի
ոչ նաև զետքու ու չէն պահանձ նաև
ուստի պարագանէ յ այս պահու ոչ առան
պահանձ ու պահանձ յ այս ոչ հայութ
ուստի ոչ առան ոչ ու նաև ուստի պահանձ
ուստի ուստի ուստի ուստի ուստի ուստի

այս ուստի ուստի ուստի ուստի ուստի
ուստի ուստի ուստի ուստի ուստի ուստի

ՀՀ Ազգային գրադարան



NL0329711

18.475

